



Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

# ԿՐԹԱԿԱՆ ԵՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆՆԵՐՈՒ

ՊԱՏՐԱՍՏՈՒՄ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՅՑ ԿՈՂՄՔ

ԵՒ ՎՈՒՆՔԱՑՈՒԱԾ ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅՈՑ

Ա.ԶԳ. ՎԱՐՉԱԿԱՆ ԺՈՂՈՎԻՆ

→→→←←←←

ՏՊԱՐԱՆ ԱԶԱՏ

ՅՈՎԱՅՐԻ ՈՒԶՈՒՆԵԱՆ

Գեյրուր 1931

372

Կ-83

372

4-33

0120-10

# ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

ՀԱՅ ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆՆԵՐՈՒ

'24 MAY 2013

50.41

# ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

## ՀԱՅ ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆՆԵՐՈՒ

## ՆԵՐԱԾՈՎԿԱՆ

Ընդհանուր պատերազմին հետեւանքով հարիւր հազարէ աւելի հայեր տեղաւորուեցան Սուրբա և Լիքանան։ Հայրենի երկրին մէջ ունեցած զարաւոր հանրային և անհատական հարստութիւններէն զրկուելով, մեր նոր հայրենիքին մէջ մատնուեցանք ամենամեծ գժուարութեանց ինչպէս այլ, նոյնպէս կրթական գործը կազմակերպելու ախսակէտով։ Ազգային ունեէ կալուած գոյութիւն չունէր։ Անկարելի եղաւ ունէ կրթական դրամագլուխ գոյացնել։ Առօրեայ ապրուածի և նիւթական գոյութեան ծանր բեռը կը ճնշէր գաղթական հայ ժողովուրդին վրայ։ Այս պայմաններու մէջ ազգային վարժարաններու վերականգնումը, որ մեր ժողովուրդի գոյութեան և պահպանման հիմնական պայմաններէն մէկն է, բնականաբար պիտի հանգիպէր ամենամեծ խոչնդուածներու։ Սակայն չոյրհիւ հայ ժողովուրդի հրաշալի կենսունակութեան, հոգատար և տեղական իշխանութեանց և ժողովուրդներու բարեացակամ վերաբերումին, այսօր Կիլիկեան մեծ արտազաղթի տասներորդ տարին հայ վարժարաններ չիմաստած են բոլոր մեծ ու փոքր քաղաքներու և



63256-67

հայաշատ գիւղերու մէջ և շնորհիւ պետական, բարեգործականի, արտասահմանի հայրենակիցներու նըպաստներուն և տեղական հասոյթներու, անոնց քանակն ու որակը հետզնետէ բարելաւուելու վրայ են բարեբախտաբար: Բաւական է միայն յիշել, որ այսօր Լիբանանի մէջ ունինք 17 ազգային վարժարաններ, առանց հաշուելու մեր հայ կաթոլիկ և բողոքական եղբայրներու ունեցած դպրոցները:

Ժամանակը հասած է այլես, որ մեր այս վարժարանները որոշ կարգ ու կանոնի ենթարկենք, որպէս զի հայ նոր սերունդը անոնցմէ առաւելագոյն օգուտը քաղէ: Շատ բնական է թէ՝ վերոյիշեալ պայմաններու մէջ հիմնուող վարժարանները չէին կրնար օրինակելի կրթական հաստատութիւններ ըլլալ, ո՛չ առողջապահական (չէնքի ևլն) և ո՛չ ալ ուսումնական ու կարգապահական տեսակէտներով: Շնորհիւ ուսումնական խորհուրդի և վարչութեան յարատել ջանքերուն մեր դպրոցներու կանոնաւորման և բարեկարգութեան համար անհրաժեշտ նախապատրաստական աշխատանքները մեծ մասմբ կատարուած են այսօր:

## ԿՐԹԱԿԱՆ ԾՐԸԳԻՐ ԵՒ ՀՐԱՀԱՆԳ.

(ԿԱ. ԶՄԱԿԱՆ ԿԱՆՈՆ ԱԳԻՐ)

1) Նկատի ունենալով, որ Պոլսոյ «Կրթական Դրագիր Ազգ. Վարժարանաց» (տպ. Պոլիս 1897) այլ ևս չէր կրնար բաւարարել մեր կրթական ընդհանուր և տեղական պէտքերը, 1928 ին Ազգային վարչութեան Խւսումնական Խորհուրդը «Առժամեայ կրթական Ծրագիր» մը պատրաստած էր մեր վարժարանները փրկելու համար անձրագիր և պատահական դասաւանդութեան վատանգէն», յայտարարելով հանգերձ իրաւամբ որ «վերջնական ձև և բովանդակութիւն

ունեցող հիմնական ծրագրին հրատարակութիւնը կը պահանջէ մասնագիտական երկար աշխատութիւն և նիւթական զոհողութիւն»: Դժբախտաբար նոյնիսկ այս ծրագիրը չգործադրուեցաւ, բաղձալի կրթական միօրինակութիւն ներմուծելու համար մեր դպրոցներու մէջ: Ներկայ Ռւսումն. Խորհուրդը և Վարչութիւնը նկատի առնելով որ 1) Պոլսոյ 1897 ի կրթական ծրագիրը հիմնուած էր էապէս 1887 Յունուար 18ի Ֆրանսայի կրթական նախարարութեան ծրագրին վրայ՝ 2) որ Սուրիոյ և Լիբանանի հայութեան ազգային վարժարաններու կրթական ծրագիրը անհրաժեօս եր պատշաճեցնել ֆրանսայի արդի կրթական ծրագրին, որ 1887 էն ի վեր բազմապիսի փոփոխութիւններու ենթարկուած էր կրթական նախարարութեանց զանազան հրամանագրերով (ԱՐԳԵԼԵ) և որոնք 1923 Փետր. 23 ին կրթական նոր ծրագրի մը ծնունդ տուած էին և անկից ետքն ալ նորանոր հրամանգններով կը ճոխանային, 3) որ Փրանսական կրթական ծրագիրը ընդունուած էր Սուրիոյ և Լիբանանի կառավարութեանց կողմէ իրը հիմն տեղական պաշտօնական դպրոցներու, մանկապարտէզներու և նախակրթարաններու, (աե՛ս Programmes des Études Primaires annexé au décret 4298. Décret No 4435 en date du 28 Janvier 1929, Beyrouth), 4) որ ուշ թէ կանուխ անհրաժեշտ էր մեր ազգային վարժարաններու կրթական ծրագիրը յարմարցնել տիրող պաշտօնական ծրագրին, ոչ միայն տեղական և հոգատար կառավարութեանց հետ ներդաշնակ յարաբերութիւն պահելու, այլ մանաւանդ մեր ներկայ սերունդին առաւելագոյն պատշաճ ուսումն և կրթութիւն տալու, մեր դպրոցներուն վարկը և մակարդակը բարձրացնելու և մեր ուսանող սերունդին գիւրութիւններ ընծայելու ֆրանսական և տեղական բարձրագոյն վարժարաններ յաձախելու և անոնց

ուսանողութեան իրաւունքները վայելելու համար, Աւոունմնական Խորհուրդը որոշեց Մանկապարտէզներու և Նախակրթարաններու նոր կրթական ծրագիր և հրահանգներ պատրաստել Ֆրանս և Տեղ կառավարութեանց պաշտօնական ծրագրին համաձայն :

Ահա այս նպատակներու իրազործման համար 1930 Մայիսին հրատարակուեցաւ «Կրթական Ծրագիր Ծաղկոց-Մանկապարտէզներու» և «Հրահանգ» մը կը թական Ծրագիրը՝ գործադրելու և Մանկապարտէզներու Վարչութիւնն ու կարգապահութիւնը կանոնաւորելու համար : Ենքայ «Կրթական Ծրագիր Հայ Նախակրթարաններու» աշխատութեամբ և այս ծրագրին գործադրութեան «Հրահանգսվ» մեծ քայլ մը առած կ'ըլլանք մեր ազգ . վարժարաններու կազմակերպութեան տեսակէտով : Ազգային Վարչութեան կը մնայ այս ծրագիրներուն գործադրութեան հոգը, անոր թերիներն ու պակասները գործնականապէս տեսնելու և սրբագրելու համար : Միաժամանակ անհրաժեշտ է նետապնդել շարունակ քաղաքակրթ մեծ ազգերու մանաւանդ Ֆրանսայի կրթական շարժումն ու բարենորոգութեանը, յաւելուածական հրահանգներով զանոնք ներմուծելու համար մեր կրթական ծրագրիներու մէջ: Մեր բոլոր ազգային վարժարանները պարտաւոր են ուրիշն այս և վերոյիշեալ ծրագրիը գործադրել, բաղձալի հիմնական միօրինակութիւն և բարենորոգում ներմուծելու համար մեր դպրոցներու մէջ :

Ֆրանսական կրթական Ծրագրին համաձայն, Բարձրագոյն Նախակրթարան մը պէտք է ունենայ 1) Նախապատրաստական դասարան մը (6-7 տարեկան տղայոց համար), 2) տարրական դասրեբաց (2 տարի, 7-9 տարեկաններու), 3) Միջին դասընթաց (2 տարի, 9-11 տարեկաններու) և 4) Բարձրագոյն

դասընթաց (2 տարի, 11-13 տարեկաններու համար): Այս հաշուով մեր բարձրագոյն նախակրթարանները պէտք է ունենան 7 տարուան շրջան մը :

### ՈՒՍՈՒՅՉԱԿԱՆ ՀԱՐՑ

Լաւագոյն կրթական ծրագիրներն անգամ անկարելի է գործադրել մեր ազգային և առհասարակ ամէն ազգի և ամէն տեսակի դպրոցներուն մէջ, եթէ զասաւանդող ուսուցիչները զիտական և մանկավարժական պատրաստութիւն չունին: Այս տեսակէտէն առաջնորդուելով Ուսումնական Խորհուրդը անհրաժեշտ գատեց մանրազնին քննութեան բովէն անցնել էիրանանի ազգային վարժարաններու մէջ պաշտօնավարող բոլոր ուսուցիչ ուսուցչուհիներու վկայականները և պաշտօնավարութեան վերաբերեալ բոլոր թուղթերը 1929- 30 թուականներուն: Այս քննութեան հետեանքով ուսուցիչները բաժնուեցան որոշ դասակարգերու և ըստ այնու օրոշուեցաւ անոնց վկայականները տալ ըստ անոնց պատրաստութեան և կարողութեան: Հրահանգ տրուեցաւ բոլոր թաղական Խորհուրդներուն և Հոգաբարձութեանց չհրաւիրել ուեէ ուսուցիչ ուսուցչուհի ազգային վարժարաններուն մէջ պաշտօնավարելու առանց Ուսումնական Խորհուրդին անոնց տրուած վկայականը տեսնելու: Իբր հիմնական պայման ընդունուեցաւ սա սկզբունքը՝ թէ մեր նախակրթարաններու մէջ ցայծմ պաշտօնավարող ուսուցիչները առնուազն երկրորդական վարժարանէ մը շըրջանաւարտ և կամ ուսուցչական քննութեամբ Պոլոյ Ուսումն, Խորհուրդէն վկայեալ պէտք է ըլլան: Սակայն նկատի առնելով այն պարագան, որ մեր ներկայ ուսուցիչներու և մանաւանդ ուսուցչուհիներու կարեսը

մէկ մասը նախակրթարաններէ ելած են, որոշուեցաւ զանոնք ուսուցչական քննութեան ենթարկել, ուսուցչական քննութեան ծրագիր մը և Թէնիչ Յանձնաժողով մը կազմելէն ետքը, որով միայն կարելի պիտի ըլլայ մեր ուսուցչութիւնը վերջնականապէս մաքրադրել անկարող տարրերէ և այս որքան շուտ այնքան լաւ:

Լրջօրէն նախապատրաստուած ուսուցչութիւն ունենալու հարցը այնքան կենսական է մեր ներկայ և ապագայ սերունդի դաստիարակութեան տեսակետով, որ Ուսումն. Խորհուրդն ու Վարչութիւնը հաճոյքով կ'ողջունեն այն բոլոր ձեռնարկները, որոնք այս նպատակին կը ձգտին անկեղծ բար և կամ ներկայ ուսուցչութեան բարոյական, մտաւոր և նիւթական վիճակը բարուոքելու և բարձրացնելու կը նկրտին պատշաճ և օրինական միջոցներով: Ամէնքիս նպատակը պէտք է ըլլայ ունենալ իր կոչոմի բարձրութեան վրայ կեցող և միմիայն ազգային մատաղ սերունդի արդիական և առողջ դաստիարակութեան վեհ նպատակին նուիրուած ուսուցչութիւն մը, վեր բոլոր կուսակցական և քաղաքական միտումներէ և գործունէութենէ, որոնցմէ միշտ հեռու և բարձր պէտքը է մայ ազգային վարժարանը: Անշուշտ ազդային իշխանութեանց պարտականութիւնն է ապահովել ուսուցչութեան հետզետէ նիւթական այնպիսի պայմաններ, որ ան ապրուատի հոգերէն բոլորովին ազատուելով, ամբողջովին նուիրուի դաստիարակութեան նուիրական գործին:

### ԴԱՍՍԳՐԻՔԵՐՈՒԻ ԽՆԴԻՐ

Ազգային դաստիարակութեան կարեոր խնդիրներէն մէկն ալ դպրոցական դասագրեներու հարցն է: Անբաժեշտ է գոյութիւն ունեցող բազմաթիւ դասա-

դրքերու մէջէն ընտրել լաւագոյնները, գիտական և մանկավարժական տեսակէտներով պատրաստուածները, որոնք հազուազիւտ են դժբախտաբար և պակսողներուն տեղ նորեր պատրաստել տալ ծանօթ մասնագէտներուն, որով մեր կրթական գործին կարեոր մէկ պահանջը գոհացուցած պիտի ըլլանք: Այս ուղղութեամբ Ուսումն. Խորհուրդը գործի ձեռնարկեց կարդ մը ծանօթ մասնագէտներու կարծիքը հարցնելով մեր գպրոցներու մէջ գործածուած դասագրքերու մասին: Այս կարծիքները ժողվելէն ետքը կարող մասնագէտներէ յանձնաժողով մը կազմելով անոնց քննութեան ալ հնաթարկելու է այս կարեոր խնդիրը, ըստ այնմ որոշ շում մը տալու համար մեր ազգ. վարժարաններու մէջ գործածուելիք դասագրքերու կամ նոր դասագրքեր պատրաստել տալու մասին:

### ՈՒՍՈՒԹՄԱՆ ՏԱՐԲԵՐՈՒԹԻՒՆ ԵՒ

### ԴՊՐԱՑՈՒԿԱՆ ԿԵԴՐՈՒՆՑՈՒՄ

Նախակրթարաններու նպատակն է կազմել մանուկներու բարոյական նկարագիրը և նախապատրաստել զանոնք գործնական կեանքի համար, տալով անոնց ամէնէն անհրաժեշտ գիտելիքները: Նոյն իսկ ամէնէն քաղաքակիրթ մեծ ազգերու մէջ նախակրթարանի աշակերտներուն մեծագոյն մասը երկրորդական և բարձրագոյն ուսմանց չեն հետեւիր: Մեր մէջ շատ քիչերուն վիճակուած է այդ բախտը: Միւս կողմէ պէտք է նկատի առնել, որ ամէն երկիրներու մէջ քաղաքի և գիւղական բնակչութեանց կեանքի պահանջները որոշ տարբերութիւններ կը ներկայացնեն: Այսպէս քաղաքացիք կը միտին աւելի պաշտօնեայ, առեւտրական, արհեստաւոր, և աւելի բարձր ուսում-

առնելով, ուսուցիչ, ճարտարագետ, փաստաբան, բը-  
ժիշկ ևայլն դառնալու : Դիւղական բնակչութեան  
շահը կը պահանջէ, որ իր զաւակները տարրական  
ընդհանուր զարգացում մը առնելէն ետքը, դառնան  
երկրագործներ, կաթնատնտեսներ, անասնաբոյններ,  
մեղուաբոյններ, արհեստաւորներ, ծովեղերեայ տեղեր՝  
ձկնորսներ, ևայլն : Անչուշտ անոնցմէ մասնաւոր ըն-  
դունակութիւն ցոյց տուողներունկառավարութիւնը կամ  
ունեոր ծնողքը զիւրութիւններ կ'ստեղծեն բարձրա-  
գոյն ուսում առնելու : Այս տարբեր պահանջները նը-  
կատի առնելով և կրթական ծրագրին միօրինակութիւ-  
նը պահելով հանդերձ, քաղաքի և զիւղի պահանջին  
համաձայն մասնաւոր կարեորութիւն պէտք է տրուի  
նախակրթարաններու մէջ որոշ առարկաներու, այսպէս  
քաղաքներու մէջ առեւրական տոմարակալութեան,  
մեքենագրութեան, սղագրութեան և առհասարակ լիզ-  
ուական, հաշուական և առեւրական գիտութեանց,  
իսկ զիւղերու մէջ գիտութեանց և արհեստներու, երկ-  
րագործութեան, անասնաբուծութեան, մեղսուաբու-  
ծութեան, շերամաբուծութեան ևայլն : Մենք չունինք  
գեռ զՓախտաբար ոչ արենստագիտական, ոչ առե-  
տրական և ոչ ալ երկրագործական ևայլն զպրոցներ,  
հետեւաբար մեր նախակրթարաններու մէջ աւանդ-  
ուածը պիտի ըլլայ միշտ տարրական գիտելիք : Ան-  
չուշտ ամէնքիս ալ ջերմ փափաքն է, որ թաղերու,  
գաւառներու, քաղաքներու և զիւղերու մէջ ունե-  
նանք նախակրթարաններ կամ արհեստագիտական և  
այլ զպրոցներ բարձրագոյն դասընթացքներով : Աս-  
կայն նկատի առնելով մեր նիւթական անձուկ վի-  
ճակը և այսպիսի ծրագրի ներկայիս դործագրութեան  
անհարաւորութիւնը, սիրուած ենք Ուսուցման Կեր-  
տոնացում յառաջ բերել մեր թաղերու և գաւառներու  
զպրոցներուն մէջ : Այսպէս, եթէ Պէյրութը բաժ-

նըւի 6-7 թաղերու քէմբի բնակչութեան վերջնական  
տեղաւորումէն ետքը, անկարելի է որ մենք կարենանք  
6-7 բարձրագոյն նախակրթարաններու ծախքերը հո-  
գալ և օրինակելի նախակրթարաններ ունենալ : Մինչ-  
դեռ եթէ հայութեան հոծ բնակավայրերու կեղրոննե-  
րու մէջ պահենք 3 նախակրթարան և անոնց շուրջը  
գտնուող թաղերու մէջ մանկապարտէզներ և միայն  
հեռաւոր թաղերու մէջ տարրական նախակրթարան,  
այն ատեն կրնանք զանոնք համեմատաբար լաւագոյն  
վիճակի մէջ պահել, քանի որ նախակրթարանները  
մեծ ծախք կը պահանջնեն, մինչդեռ մանկապարտէզ-  
ները շատ աւելի համեստ գումարներով կրնան տըն-  
տեսուիլ : Այսպէս օր կարելի է բարձրագոյն նախա-  
կրթարաններ պահել Ս. Նշան, Եշրէֆիյէ, Անդր Նահր,  
և մանկապարտէզներ շրջակայ թաղեր, տարրական  
նախակրթարան մը Մազրա: Նախակրթարաններ Զահ-  
լէ, Թրիփոլի, Ասյոտ, մանկապարտէզ-տարրական նա-  
խակրթարան Ճիւնիէ, Ճիպէլ, Ալէյ ևայլն :

Պէյրութի և կամ այլ կեղրոննական քաղաքնե-  
րու մէջ գտնուող նախակրթարանները հետզհետէ կը ը-  
նանք օժտել լրացուցիչ դասընթացքներով, մէկուն մէջ  
պատրաստելով ուսուցիչ ուսուցչուիններ, միւսին մէջ  
առեւրական և երրորդին մէջ արհեստագիտական դա-  
սընթացքներ հիմնել, որոնք բնական է ժամանակի  
և դրամի կը կարօտին :

Պաշտօնական քննութեանց տեսակէտով մեր  
բարձրագոյն նախակրթարանները աւարտելով քննու-  
թիւն տուողները կ'ստանան Certificat d'études pri-  
maires — Վկայական նախակրթութեան — երկրոր-  
դական գարժարանի դասընթացքը աւարտողները և պե-  
տական ծրագրին համաձայն քննութիւն տուողները  
Bachelier-ի տիտղոս և միւսները համապատասխան վլ-  
կայագրեր կ'ստանան :

Այս ձեռվլ կատարուած ուսուցման կեղրոնաւցումը օդտակար կ'ըլլայ թէ՝ գործնական տեսակէտով մեր ժողովուրդին և թէ նիւթական դիւրութիւններ կ'ընծայէ մեր վարժարանները վերջնականապէս կանոնաւորելու :

### ԼԵԶՈՒՆԵՐ

Ուսուցման կեղրոնացումը կը դիւրացնէ նաև օտար լեզուներու՝ մանաւանդ ֆրանսերէնի և արաբերէնի ուսուցումը մեր վարժարաններուն և մանաւանդ լրացուցիչ դասընթացքներ ունեցող բարձրագոյն նախակրթարաններուն մէջ։ Արդէն նախակրթանի բարձրագոյն դասարաններուն մէջ, սկսելով միջին դասընթացքի 2-րդ տարիէն, պարտաւորիչ է կարդ մը առարկաներ մասամբ կամ ամբողջովին ֆրանսերէն աւանդել, ինչպէս 1) թուարանութիւն, 2) ֆրանսայի պատմութիւնն ու աշխարհագրութիւնը, 3) դիտութիւնները, 4) ձեռական աշխատանքներ և այլն, որով տղարց հնարաւորութիւն կը տրուի ֆրանսերէն լեզուն հետզետէ աւելի վարժ խօսելու հայերէն ու ֆրանսերէն իրենց միտքերը գիտական ոճով արտայայտելու :

Ծրաբերէնի համար նոյն զրութեան կրնանք հետեւիլ ո՛չ միայն արաբերէնի դասերու միջոցին այլ նաև նախակրթարաններու բարձրագոյն դասընթացքին մէջ լիբանանի և Սիւրիոյ պատմութեան և աշխարհագրութեան դասեր աւանդելով արաբերէն լեզուով։

### ՈՒՍՈՒՄՆ. ԽՈՐՀՈՒՐԴ

Լիբանանի և Սիւրիոյ բոլոր հայ ազգային վարժարաններուն մէջ միօրինակ կրթական ծրագիր կանոնագիր ներմուծելու համար անհրաժեշտ է ստեղծել Կեդրոհական Ուսումն Խորհուրդ մը, ինչպէս էր Թիւր-

քիոյ մէջ Պոլսոյ Ուսումն Խորհուրդը և ասոր ենթակայ ստորագաս մարմիններ թեմերու կեղրոններուն մէջ։ Ասկից զատ անհրաժեշտ է ունենալ առնուազն մանկավարժ Կրթական Տեսուչ մը, որ շարունակ ազգային վարժարաններ յաճախելով հակէ կրթական ծրագրին և հրահանգներու գործադրութեան, և պարբերական տեղեկագիրներով տեղեակ պահէ Ուսումն Խորհուրդը ազգ վարժարաններու մէջ կատարուած աշխատանքէն և իր մասնագիտական խորհուրդներով օժանդակէ դպրոցական վարչութեանց։

### ԴԱՍԱՑՈՒՑՈՒՅ

Նկատի առնելով որ մեր ազգ վարժարաններու մէջ ստիլուած ենք ուսուցանել երեք լեզուներ, այսինքն մայրենի լեզուն զատ նաև ֆրանսերէն և արաբերէն, և ֆրանսայի և լիբանանի և Սիւրիոյ պատմութեան և աշխարհագրութեան հետ նաև Հայոց պատմութիւն և աշխարհագրութիւն և կրօն ու եկեղեցական պատմութիւն, այս պատճառներով բնական է որ մեր վարժարաններուն դասացուցակը շատ աւելի ծանրաբեռնուած է քան ֆրանսական և արաբական դպրոցներուն, որոնցմէ ֆրանսականը շաբաթական 30 ժամ, իսկ լիբանանեանը 32,30 ժամ կը յատկացնէ շաբաթական դասերուն և դադարին։ Անոնք կրնան շաբաթական երեսուն կամ 32,30 ժամով գոհանաւ, մինչ մենք ստիպուած ենք 34 ժամ յատկացնել նախապատրաստական դասարանին, 34,30 ժամ տարրական և միջին դասընթացքին և 36,30 ժամ բարձրագոյն դասընթացքին։ Դասերու տեղութեանը 45 վայրկեան հաշուելու է բացի մարմնամարզի (կէս ժամ), ձեռական աշխատութեանց ու երգի դասերէն, որոնք ի հարկին կրնան ժամ մը տեել։ Դասամիջոցներու դադարը

## Պահաղան Պասարաններոն մէջ :

Նիստու դրմ.	Տար. դրիբ	Սիզին դրմ.	Բժան. դրմ.
Մանջ-աղջիկ	մանջ-աղջիկ	մանջ-աղջիկ	մանջ-աղջիկ
1) Կրօն և հայոց եկլ. Պամ.	1,30	1,30	1,30
2) Բարոյակ. և քոքչին. Կրթ.	1,30	1,30	1,30
3) Հայոց պատմութիւն.	1,30	1,30	1,30
4) Հայերէն	1,30	1,30	1,30
5) Թրաներէն	3,15	5,15	5,15
6) Արարերէն	5,15	5,15	5,15
7) Հայու. թուաբ. Երկրշիթ.	3,45	3	3
8) Դիտու. թիւնք	2,15	3,45	5,15
9) Ֆրնո. Լիք. Սիւր. և լնդհ. պամ.	1,30	1,30	2,15
10) Սիւնարհակրութիւն	—	1,30	1,30
11) Գծաղրութիւն	1,30	1,30	1,30
12) Ջեսական աշխատանքիւն	1,30	1	1
13) Երդեցողութիւն	1,30	1	2
14) Ուսումնակարգ	1,30	0,45	1
15) Դարդար	2,30	2,30	2,30
	34	34,30	36,30
	34,30	34,30	36,30

10 վայրկեան է : Ներկայ ծրագիրը կարելի է գործադրմել մեր վարժարաններու մէջ իրր դասաժամ ընդունելով 8-12 և 1,30-4,30 և կամ 2-5 տեղական յարմարութեանց համաձայն : Անդապատճեան համար ալ կարելի է ժամեր յատկացնել 5-6-7, մանաւանդ մեծերուն, եթէ տեղական պայմանները կը ներին :

# ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆՆԵՐՈՒ




63256-67

Ա. ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՔ  
(6-7 տարեկան տղայոց համար)

## 1. ԿՐՕՆ

Հին կտակարանէն պարզ և դիւրըմբռնելի պատմութիւններ, համապատասխան ընտրեալ պատկերներ ցուցադրելով տղայոց և միշտ բարոյացուցի, եզրակացութիւն մը հանելով։ Այսպէս, պատմել աշխարհի ստեղծագործութիւնը և նախաձնողաց պատմութիւնը (Աստուածային բարութեան փոխարէն անհնազանդութիւն և պատիժ), Կայէնի և Արէլի պատմութիւնը (չար նախանձին հետևանքը), Բարելոնի աշտարակաշինութիւնը (անմիտ ձեռնարկներու և ըմբռոստութեան վնասը), Նոյ և Զրհեղեղ (արդար և ուղղամիտ մարդուն վարձատրութիւնը), Իսահակ և Ռեբեկա (աշխատասիրութիւն և երջանկութիւն), Յակոբ և Եսաւ (մայրական սէր և աշխատասիրութեան վարձատրութիւն), Յօվանէփ Գեղեցիկ (չար նախանձին պատիժը և ուղղամտութեան վարձատրութիւնը), Մովսէս և Կարմիր Ծովու անցքը (չարութեան պատիժը և անմեղ ժողովուրդի մը պատմուիլը), Սամփսոն, Դաւիթ և Գողիաթ։ Դաւիթ և Սաւուզ, Սոլոմոնի Դատաստանը, Գոթողիա և Յովաս, Յուդիթ, Նաբուգոթոնու-



սոր և երեք մանկունք . Եսթեր և Մակարայեցիներու կեանքէն պարզ պատմութիւն մը . պարզ գաղափար մը տալ տիեզերքի մէջ տիրող կանոնաւորութեան (աշխարհ , արե , լուսին , աստղեր ևայլն) միջոցով գերագոյն բանական Զօրութեան և Աստուծոյ մասին : Բացատրել «Տէրունական աղօթք»ը և ուսուցանել :

## 2. — ԲԱՐՈՅՑԱԿԱՆ

Պարզ խօսակցութիւններ տղայոց ընկերական , ընտանեկան և շրջապատող կեանքէն և պարզ բարութեամբ , նպատակ ունենալով քաջալիքելու տղայոց և ձնչելու անոնց չար ու վնասակար յատկութիւնները : Մեծ մարդոց պարզ կենսագրութիւններ : Լաւ սովորութեանց վարժութիւն (Ժաքրութիւն , կարգապահութիւն , ճշգապահութիւն , քաղաքավարութիւն ևայլն) : Ուսուցիչը պէտք է տղայոց իր կեանքով և վերաբերութեան , քաղաքավարութեան , բարութեան , աշխատամիրութեան ևայլն : Մշակել տղայոց մէջ պարզ պատմուած քններով և զործնական օրինակներով ընտանեկան սէր , յարգանք և հասզանգութիւն ծնողաց և ուսուցիչներուն ևայլն : Ընկերային (ընկերութիւն , իրարօգնութիւն , համբերատարութեան , աշխատամիրութեան ևայլն : Մշակել տղայոց մէջ պարզ պատմուած քններով և զործնական օրինակներով ընտանեկան սէր , յարգանք և հասզանգութիւն ծնողաց և ուսուցիչներուն ևայլն) և միաժամանակ հասկցնել անոնց յոսի ունակութեանց և մոլութեանց (նախանձ , զրպարտութիւն , վրէժինդրութիւն , ամբարտաւանութիւն , շուայլութիւն , ծուլութիւն , նտախօսութիւն , կոշտութիւն , բռնութիւն ևայլն) վնասակարութիւնը :

## 3. ՀԱՅԵՐԵՆ

ՀԵԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ . — Վարժութիւն ուղիղ ընթերցանութեան , սկսելով պարզ ծանօթ բառերէն և ապա շնորհնակելով նոյն մարզանքը պարզ նախադասութիւններով և զիւրահասկնալի փոքրիկ հատուածներով : Ուսուցանել բաղաձայններու , ձայնաւորներու և երկվանկներու հիմնական արտասանութիւն բառերուն սկիզբը , մէջը և վերջը , ինչպէս նաև կէտադրութեան պարզ կանոնները միշտ զիւրահասկնալի օրինակներով : Պարզել բառերուն , նախադասութեանց և պարբերութեանց նշանակութիւնն ու իմաստը :

ԱՐՑԱՆՈՒԹԻՒՆ . — Դիւրըմբոնելի և տղայոց առօրեայ կեանքին վերաբերեալ պարզու կարծ ոտանաւորներու արտասանութիւն , բառերուն ու ոտանաւորներու նշանակութիւնն ու իմաստը նտիրօք պարզելէն ետքը :

ԲԱՌԱԳԻՑՈՒԹԻՒՆ . — Բառագիտութեան և առողանութեան պարզ մարզանք :

ՑԻՇԱԳՈՒԹԻՒՆ եի ՊԵՐԾԱԲԱՆՈՒԹԻՒՆ . Պարզ դիւրըմբոնելի և հետաքրքրական կարծ հատուածներու ընթերցաւմ կամ արտասանութիւն , ուսուցչին կողմէ , զորս աշակերտները կը լսեն և ամփոփելով կը պատմեն :

ՈՒՂՂԱԳԻՑՈՒԹԻՒՆ . — Սորված բառերու , նախադասութեանց և կարծ պարբերութիւններու արտագրութիւն և ապա անոնց թելագրութեամբ գրութիւնը :

ԴԻՐ . — Մանր տառերու գրութեան վարժութիւն :

## 4. — ՀԱՅՈՅ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Հայկագնեան և արշակունեաց շրջանէն աւանդական հատընտիր և ուշագրաւ գէպքեր , պարզ և զիւրըմբոնելի պատմուածքի ձեռվ և պատկերներ

ցուցադրելով, որոնցմով հայ նկարագրին ազնիւ գիծերը կը պարզուին և յոտի յատկութեանց վնասները կը մատնանշուին: Այսպէս Հայկ և Բէլ (քաջութիւն և աղատասիրութիւն), Արամ (Հայրենիքի պաշտպանութիւն արտաքին թշնամիներու գէմ). Արա Գեղեցիկ (Հայրենիքի անկախութեան սէր և անձնուիրութիւն), Վահագն (հայ դիւցաղն). Պարոյր (Միութեան ոյժը). Վաղարշակ Պարթև (Արշակունեաց հիմնադրութիւն և Հայոց պատմութեան գիւտը Մարաբասի միջոցով). Արտաշէս Մեծ և Սաթենիկ. Արտաշէսի մահը և Արտաւազդի նախանձն ու պատմուիլը. Տիգրան Մեծ և Տիգրդատ ու Հռոմայցիք (ամբարտաւանութեան և շափազնցեալ ինքնավստահութեան և թշնամիին ոյժը արհամարհելուն վնասները). Տրդատ Մեծ և Գրիգոր Լուսաւորիչ (Քրիստոնէութեան մուտքը Հայաստան). Հայոց հեթանոսական կրօնի և չաստուածներու մասին պարզ պատմուածքներ և զաղափար:

### 5. — ՔՐԱՆՍԵՐԻՆ

1. Դասաւանդել ֆրանսերէն լեզուով առաջին զամէն սկսեալ և բացասիկ պարագաներու մէջ հայերէն լեզուն գործածել բացատրութեանց համար:

2. ԸՆԹԵՐՑՑԱՆՈՒԹԻՒՆ.— Պարզ բառերու հնչումով, որոնք իրենց շրջապատէն պէտք է առնուին, սորվեցնել այբբենարանը և միաժամանակ կազմել փոքրիկ պարզ նախագասութիւններ և ապա կարճ պարբերութիւններ իրենց սորված բառերով, տալով հետքէ զաղափար ձայնաւորի, բաղաձայնի, վանկերու և կէտերու և քերականական տարրական ըմբռնութիւնը (յօդ, անուն, բայ, գերանուն, ածական) մասին:

3. Գիր.— Գրել տալ ուսուցուած ծանօթ բառերը և ապա կարճ նախագասութիւնները, մասնաւոր

ուշադրութիւն դարձնելով մանր գրերու գեղագրութեան եւ ուղղագրութեան:

4. ԱՌԱԴԱՆՈՒԹԻՒՆ.— Մասնաւոր ու շաղրութիւն դարձնել առողանութեան և առաջին օրէն սկսեալ տղաքը վարժեցնել ֆրանսականառողանութեամբ արտասանելու ուսուցուած բառերն ու նախագասութիւնները:

### 6. ԱՐԱԲԵՐԻՆ

Ֆրանսերէնի պէս ծանօթ բառերու և ապա փոքր նախագասութիւններու կազմութեամբ ուսուցանել ընթերցանութիւն:

1. ՔԵՐՈԿԱՆՈՒԹԻՒՆ.— բաղաձայներ (արեային տառեր = շամսիյէ, և լուսնային = քամարիյէ). արմատական եւ յաւելուածական տառեր (էլ-զաւախտա), սկար տառեր (հուրուֆուր/լլատի), ձայնաւորներ (տամմա, ֆատհա, զասրա). երկարման տառեր (հուրուֆուր-մատտի). դանիլին, երկվանիկեր, ուղղագրութեան նշաններ (էտ. զառւապէթ, էլ-համզա, էլ-զաու, էլ-մատտա, էլ-զէտիտ, էլ ճազմա կամ էս. սուգուն) միշտ հետաքրքրող ընթերցումի միջոցին. վանի, շեշ, կէտագրութիւն ու անուն. բայ, դերանուն, պարզ նախագասութիւն: Առողանութիւն: Մասնաւոր ուշադրութիւն դարձնել, որ աշակերտները առաջին օրէն զուտ արաբական առողանութեամբ հնչեն բառերն ու նախագասութիւնները:

2. — ԸՆԹԵՐՑՑԱՆՈՒԹԻՒՆ.— Մասնաւոր հոգածութեամբ ուսուցանել արաբական տառերուն ձեւերը բառերուն սկիզբը, մէջը և վերջը: Ընթերցանութիւնը սկսել նախ միավանկ և ապա երկագանկ ու եռավանկ բառերով և միշտ տղայոց ուշադրութիւնը հրաւիրելով միացող (attachées) և անջատ (détachées) տառերուն վրայ: Տառերը պէտք է ուսու-

ցանել իրենց հնչական արժեքով:

3. ՈՒՂԴԱԳՐՈՒԹԻՒՆ. — Կարդացուած բառուն ու նախադասութիւններուն ուղղագրութեան վարժութիւններ բերանացի և զրաւոր:

4. ՑԻՇՈՂՈՒԹԻՒՆ. — Ամենապարզ և զիւրահասկնալի և կարծ հատընտիր հատուածներ զոց ընել և արտասանել տալ անթերի կերպով:

5. ԳՐՈՒԹԻՒՆ. — Ուսուցանել տասերու գրու. թիւնը բոսին սկիզբը, մէջը և վերջը: Մասնաւոր հոգ տանել գեղագրութեան:

## 7. ԹՈՒՍԱԾԱՆՈՒԹԻՒՆ Ուսողութիւն

ԹՈՒՍԱԾԱՆՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԿԱՆ ՏԱՐԵՐՔ. — Հաշուել զանազան առարկաներ մինչ 10, 20, 30 և այլն մինչև 100 և գարճութիւն. Թուանշաններու զրութեան:

ԳՈՒՄԱՐՄԱՆ ԵԽ ՀԱՆՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ. — Հաշուել զանազան առարկաններով (ցուպիկ, գնդակ և այլն), և ապա նոյն զործողութիւնները յիշողութեամբ և զրաւոր, սկսելով նախ 1-10 և ապա հետզհետէ 10-100, հաշուել 2, 3 և 4 աւելցնելով կամ հանելով նախ միաւորներէն և ապա տասնաւորներէն: Բազմապատկել 2ով, 3ով կամ 4ով նախ միաւորներ և ապա տասնաւորներ, բաժանել 2ով, 3ով, 4ով նախ միաւորներ և ապա տասնաւորներ, կատարել տալով այս զործողութիւնները նախ զանազան առարկաններով և ապա զրաւոր կամ յիշողութեամբ:

Հաշուական նախնական վարժութիւններ, զրաւոր կամ բերանացի խնդիրներով առանց 100ը անցնելու և քաղուած տղայոց առօրեայ կեանքէն:

ԲՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՊԱՓԱՐ ՄԱԼ ՄՊԱՅՈԳ ՄԻՋԱԿԱՆ ՀԱՓԵՐՈՒՆ և կշիռներու մասին (գրամ, կանգուն, մէթր, օքքա, կրամ, քիլոկրամ, լիտր և այլն:)

## 8. ԻՐԱԳԻՑՈՒԹԻՒՆ. (Leçons de Choses)

Դասարանի մէջ կամ պտոյտի միջոցին տալ մպայոց գործնակ ան օրին ակներով կամ ընտառնեկան խօսակցութեան ձեռվ նախնական ծանօթութիւններ մարմնոյ եական մասերու, ժամանակի բաժանումներու (օրեր, ամիսներ, եղանակներ և լին), աշխարհի կողմերու (հիւսիս և հարաւ, արևելք և արևմուտք), կենդանական աշխարհի (անսառններ, բոյսեր, հանքեր), բնական երեւոյթներու (օդ, ջուր ևն. մասին), մըշակելով անոնց մանաւանդ դիտելու, համեմատելու և դատելու կարողութիւնները և առողջ հետաքրքրութիւնը: Մարդկային մարմնոյ մասին տարրական տեղեկութիւններ: Առողջապ սհական պարզ խորհուրդներ: Պաղպափար տալ զիւղի և քաղաքի և տեղական կարեւոր արհեստներու մասին:

## 9. ԳԾԱԳՐՈՒԹԻՒՆ (Dessin)

Ազատ գծագրութիւն մատիսով: Խմբաւորում (groupement) և շարայարում (alignement) զանազան առարկաններու, խորանարդ (cube), ցուպիկ, դրամանիշ (jeton), խիճ (cailloux) և այլն, ստուերագրի, ծրագարդերու (bordures) և վարդակերպերու (rosaces) ձևեր:

Արտագծում այս ձևերու նախ սկսել ապա առաւելապէս զանազան դոյներով :

Համաչափական (symétrique) կամ երկրաշափական փոքր գծագրութիւնք :

Արտագծում (copie) չատ պարզ սովորական առարկաներու, զպրոցական խաղալիքներու :

Ամէն տեսակի ստուերագծումներ (croquis). Օրինակումներ և կաղապարումներ (modelage):

## 10. ԶԵՌԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆ

### 1. — ՏՂԱՅՈՑ ՀԱՄԱՐ

Կտրատում թուղթի և անոնց դասաւորումը այնպիսի ձևերով, որ թուանշաններ և զանազան զարդաբեր ստացուին :

Փոքր վարժութիւններ հիւսելու և ծալլելու (կնիւն (ionc), յարդ, եղէզն, բաֆիա, թուղթ և այլն), ծակելով, կտրատելով ստուերապատկերներ չինել և զանոնք թուղթի վրայ փակցնել :

Պատրաստութիւն զանազան առարկաներու և խաղալիքներու :

### 2. — ԱԳՁԻՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

- Վերոյիշեալ վարժութեանց մէկ մասը :
- Կոստեղի վարժութիւն, ցանցակերպ հիւսուածք (Maille) սոկէ կոսանդով, շղթայիկներ, զտակներ (Barrette): Պատրաստութիւն ամենապարզ առարկաներու, պուպուլյաներու, վզնոցներու, ծնկակապերու և այլն:

### 11. ԵՐԳ

Դպրոցական երգեր ուսուցանել ունկնդրութեամբ, երդին իմաստը նախօրօք բացատրելէն ետքը: Զայնի մարզանք:

## 12. ՄԱՐՄՆԱՄՑՐՁ

Երջպարեր երգով, նմանողութեան (imitation) խաղեր և շարժումներ:

Կրթիչ և ուղիչ մարզանք և մնչախաղ, չորհալի շարժումներով հաւաքական և խմբական խաղեր:

Ծնչառական խաղեր, Ծուէտական մարմնամարզի տարերք:

## ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՔ

(7—9 ՏԱՐԵԿԱՆ)

### ԿՐՈՆ

ԵՒ ՀԱՅ ԵԿԵՂ. ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

1.— Հին կտակարանի կարգաւորեալ պատմութիւն աշխարհի ստեղծագործութեն սկսելով :

2.— Հայաստանի մէջ Քրիստոնէութեան մուտքը: Աւանդական պատմութիւն: Յիսուս և Արգար: — Արգար, թաղէսու առաքեալ և Սանդուխտ Կոյս: Բարթողիմէսու և այլ քարոզիչներ: Ոսկեանք և Սուրբիանք: Քրիստոնէութիւնը պետական կրօն: Տրդատ և Գրիգոր Լուսաւորիչ: Հսիփսիմեան և Գայիիանեան կուսանք:

3.— Բնուն, գաղափար մը տալ հայոց հին հեթանոսական կրօնի մասին (Արամազդ, Անահիտ, Միքր, Աստղիկ և այլն), կարճ և հետաքրքրական պատմութեանց ձեռով:

4.— «Հայր մեր» աղօթքը: Տասնաբանեայ պատուիրանք և քանի մը հատընտիր եկեղ. երգեր ու շարականներ, զաղափար մը տալու համար հայ կրօնական բանաստեղծութեան մասին:

## ԲԱՐՈՅԱԿԱՆ

1. — Ընտանեկան խօսակցութեամբ, բարոյաշցուցիչ և հետաքրքրական պատմուածքներով, առակներով, կարճ ու պատմերալից դիւրը մբանելի ոտանաւորներով մշակել աղայոց մէջ բարիին ու չարին, օգտակարին ու վնասակարին ըմբռնումները և զօրացնել անոնց մէջ վաէմ և աղնիւ զգացումներ և սէր՝ դէպի պարտականութիւն:

2. — Հատընտիր դիւրամատչելի հատուածներու ընթերցանութեամբ և բացատրութեամբ և անոնց մէջ ներկայացուած օրինակներով ուսուցիչը պէտք է մշակէ տղայոց մէջ անհատական, ընտանեկան, ընկերային և պետական առաքինութիւններ (մնձ մարդոց կենսագրութիւններ):

3. — Իր անձնական կեանքով և վերաբերումով և տղայոց առօրեայ կեանքէն քաղուած բարի ու չար օրինակներով ուսուցիչը պէտք է խրախուսէ բարի արարքները և յատկութիւնները և ճնշէ մեղմաբար չարերը:

4. — Պարզ ըմբռնում ընտանիքի, ընկերութեան և պետական կազմութեան:

## ՀԱՅԵՐԵՆ

1. — ԸՆԹԵՐՑԱԿԱՆՈՒԹԻՒՆ. — Սահուն և վարժընթերցում արձակ կտորներու, անոնց խմաստին և դժուարին բառերու բացատրութեամբ:

2. ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ. — Ճշգրիտ և արտայայտիչ արտասանութիւն պարզ ու դիւրը մբռնելի ոտանաւորներու, որոնք ի հարկին դոց պէտք է ուսուցուին:

3. ԲԱՌԱԳԻՑՈՒԹԻՒՆ. — Հարցումներ կարգացւած հատուածի մը մասին, ուսուցանել անոր բա-

ռերուն խմաստը, անոնց գործածութիւնն ու ուղղագրութիւնը:

4. ՊԵՐՃԱԲԱՆՈՒԹԻՒՆ (élocution). — Կարգացուած հատուածներու և ուսուցչին ըրած պատմուածքներուն բերանացի վերաբարագրութիւն կամ արտայայտութիւն գրական ոճով:

5. ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ. — Բերանացի տարբական ծանօթութիւններ անունի (պարզ, բարդ և ածտնցեալ), յօդի, ածականի, դերանունի և բայի մասին (ներգործական բայի ամէնէն աւելի գործածուած ժամանակներու մասին) օրինակ առնելով միշտ ուսուցուած կտորներ: Յոզնակիի կազմութիւն: Ածականի և անուան համաձայնութիւն, անուան և դերանունի գործածութիւն, յատկացուցիչ յատկացեալ, բայի և ենթակայի համաձայնութիւն և գլխաւոր խընդիրներու մասին գաղափար: Պարզ նախագասութիւն:

6. ՎԱՐԺՈՒԹԻՒՆ. — Բերանացի և գրաւոր վարժութիւններ ուսուցուած քերականական կանոնները գործադրելու համար: Խմբագրութիւն՝ կարճ պարբերութեանց:

7. ՈՒՂՂՈՉՐՈՒԹԻՒՆ. — Նախապատրամատուած կարճ թերագրութիւններ:

8. ԳԻՐ. — Շեղագիր գեղագրութեան և մնձ տառերու գրութեան վարժութիւն:

## ՀԱՅՈՅ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

1. — Ամփոփ տեղեկութիւններ Հին Հայաստանի աշխարհագրութեան մասին: Հայաստանի մակերեւոյթը. Հայաստանի մնձ լեռները, գետերը, լիճները և մնձ գաշտերը, միշտ քարտէսի վրայ և ի հարկին առանձին պատմերներով: Հին Հայաստանի կլիման, բուսականութիւնը, կենդանական աշխարհը,

հանքերը, հապորգակցութեան միջոցները, Հայաստանի հին մեծ քաղաքները (պատկերներով), բնակչութիւնը, արդիւնաբերութիւնը; Հին Հայաստանի բաժանումը երեք պետութեանց մէջ; Հին Հայաստանի բնակչուները (Ուրարտացիներ, Խալուխներ, Հիթիթներ; Կիլիկիա):

2. ζωήσεις την αποτίναξη της καταστροφής, που συνέβη στην πόλη της Αθήνας, μετά την έκρηκτη της ομοσπονδίας της Ελλάς, στην οποία η Ελλάς ήταν η μεγαλύτερη δύναμη, που επέβαλε την θρησκευτική επανάσταση στην Ελλάδα.

ՏՐԱՆՍԵՐԵՆ

1. ՀՆԹԵՐՑՈՒՄ.— Հետաքրքրական պարզ ու կարծ պարբերութեանց և ապա կարծ հատուածներու ընթերցում, բառերու իմաստին բացատրութեամբ և ուղիղ առոգանակթեամբ: Ապա նոյն հատուածներու ամփոփ բերանացի կրկնութիւն:

2. ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԲԱՌԱԳԻՑՈՒԹԻՒՆ.—  
Կարգացուած բառերու և ոճերու (և ապա նախա-  
դասութեանց և պարբերութեանց) իմաստը բա-  
ցատրել, զործածութիւնը սորվեցնել և ապա ուղղա-  
գրութիւնը ուսուցանել բերանացի և գրաւոր թելագ-  
րութեամբ

3. ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ.— Կարճ ու գիւրըմբռնելի  
ոտանաւորներու անթերի արտասանութիւն բառերն  
ու իմաստը կանխօրօք հիմնովին բացատրելէն և  
պարզելէն ետքը:

4. ՅԵՇՈՒՅՈՒԽԻՒՆ. — Կարձ ու հետաքրքրական պարզ պատմութիւններ կարգացուած և արտասանուած ուսուցչին կողմէ և փորձեր անոնց իմաստը տղայոց կրկնել առլու ամփոփ կերպով (Նախայերէն և ապա Գրանսներէն):

5. ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ. — Քերանացի ծանօթութիւնները տալ անունի, յօդի, ածականի, գերանունի և բայի (ներգործական բայի ամէնէն աւելի գործածուած ժամանակներու) մասին։ Յոզնակիի և իդականի կազմութիւն։ Ածականի և անունի, բայի և ենթակայի (suject), համաձայնութիւն։ Բային գլխաւոր լրացուցիչները (compléments). պարզ նախագասութեան կազմութիւն.

6. ԲԵՐԱՆԱՑԻ ԵՒ ԳՐԱՒՐՈ ՎԱՐԺՈՒԹԻՒՆԵՐ  
ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐՈՒ ԳՐՈՇԱԴՐՈՒԹԵԱՆ.—  
Եւ այս ուղղութեամբ պարզ ու կարճ նախապատրա-  
տուած թելաշըրութիւններ (dictées), և պարզ  
թարգմանութիւն ֆրանսերէն և հայերէն:

ԱՐԱԲԵՐԵՆ

1. ԸՆԹԵՐՑՈՒՄ. — Արարերէն բառեր, նախագա-  
սութիւններ և հետզհետէ պարբերութիւններ և հետա-  
քրքրական պարզ ու պղտիկ պատմութիւններ կամ  
հատուածներ տպայոց շրջապատի և ծանօթ նիւթերու  
մասին, մասնաւոր ինսամք տանելով տառերու ուղիղ  
ընթերցումին և հնչումին, պարզելով բառերու և նա-  
խադասութեանց իմաստը և քերականակ սն կանոններ:

2. ՔԵՐԱԿՈՒՆՈՒԹԻՒՆ.— Ներգործական և  
կրաւորական երատառ կանոնաւոր բայեր և անոնց  
խոնարհումը (كتَبَ فَلَلَ) և կամ (كَمْ) ապա բա-  
ղադրեալ բայերու 11 ձևերը: Բայերուն երիւու ժա-  
մանակները, կատարեալ (المُشارِع) և ներկայ-ապառ-  
նի (الماضي) ևայլն, եղանակները, թիւր (եղակի,  
յոգնակի, երկակի, (المُثُن), սեռ, դէմքը, օժանա-  
գակ բայ (لَن): Անուններուն տեսակները (ձևի,  
տեղւոյ, գործիքի ևայլն), բայանուն, նուազական

կամ փաղաքշական անուններ, իգական և արտական, անուններու հոլովումը, եղակի, յոգնակի և երկսկի (Duel) կազմութիւն: — Ածականի և զոյակունի համաձայնութիւն ու թուական անուններ, դերանուններ, նախագրութիւն, մակրայ, շաղկապ, միջարկութիւն (Interjection), պարզ նախադասութիւն, անուանական նախադասութիւն («*نَسْأَةُ الْجَنَاحِ*»), հնաթակայի (stijet *نَسْأَةُ*) և ստորոգելի (attribut *نَسْأَةُ*), համաձայնութիւն:

3. ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆ: — Բերանացի և գրաւողագրութիւն ուսուցուած բառերու, նախադասութեանց, պարբերութեանց և հատուածներու, մասնաւոր ուշադրութիւն դարձնելով քերական կանոններու գործադրութեան և բառերուն սկիզբը, մէջը և վերջը գրերու ձեւերուն: Թելագրութիւն (dictée):

4. ԳԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ: — Մասնաւոր հոգ տաշնել գրերու զանազան ձեւերուն ու գեղեցիկ գրութեան զանազան վարժութիւններով. զրել տալ մելանով:

5. ԱՐՑԱՍԱՆԱԼԻԹԻՒՆ: — Բառերը և իմաստը հիմովին բացատրելն ետքը, զոց ուսուցանել գիւրամատչելի ոտանաւորներ, կամ կարճ հատընտիր արձակ հատուածներ, մասնաւոր խնամք տանելով զուտ արաբական արտասանութեան:

6. ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆ: — Պարզ ու զիւրահասկնալի պատմութիւններ, արտասանուած կամ կարգացուած ուսուցին կողմէ և կրկնուած աշակերտներէն:

ԲԵՐԱՆԱՑԻ ԵՒ ԳՐԱԿՐՈՒԹԻՒՆ: — Պարզուած քերականական կանոնները գործադրելու համար:

## ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

1. Հնդկանուր ամփոփ գաղափար Լիբանանի և Սիւրիոյ հին պատմութեան մասին (Փիւնիկեցիք, Ասորա-Բաբելական, Եղիսաբեկան, Հիթիթեան, Մակեդոնական, Սելեկեան, Հոռմէտական, Բիւզանդական, Արաբական տիրապետութիւն). հետաքրքրական զըրաւագներ այս շրջաններէն պատկերներով և քարտէսներով:

2. Ֆրանսայի պատմութիւն մինչև 1610. շատ ամփոփ զրուագներ: Ապա Գալիա (La Gaule) արշաւանքներ: Միջին դար ու ֆրանսական միութեան կազմութիւնը, մեծ զիւտեր, վերածնունդ (Renaissance), բարեկարգութիւն (La Réforme):

## ԱՇԽԱՌՀԱԳՐՈՒԹԻՒՆ

1. ԴԻՑՈՂՈՒԹԵԱՆ ՎԱՐԺՈՒԹԻՒՆ: — Հորիզոն, երկրին անհարթութիւնները: Սշխարհի չորս կողմերը (points cardinaux) և այլն միշտ տեղական աշխարհագրական երեսոյթներէն օգտուելով:

2. ՔԱՐՑԵԼ ՃԱՆՉՆԱԼՈՒ ԵՒ ԳԾԵԼՈՒ ՎԱՐԺՈՒԹԻՒՆ: — զասարանի, զպրոցի, տան, փողոցի, թաղին, քաղաքին յատակազծերը և ապա Լիբանանի, Սիւրիոյ են. պարզ քարտէսները ցուցադրել և ընդհանուրձներով գծել տալ:

3. ԱՇԽԱՌՀԱԳՐԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԵԼԻԲԻ, ԱՌԱՋԱ, ԳԻՑԵԼԻԲ, ԵՐԼԻԲ, աստղեր, արև եւ լուսին, բեւեռասազ ու երկիր: Երկրագունիք մեծութիւնը եւ յօրինուածքը, ցամաք և ջուր և անոնց ստորաբաժնումները, (լիռ, լիռնաշղթայ, զաշտ, լիռնագալու կամ բարձրավանդակ, հովիտ, կղզի, թերակղզի, պարանոց, հրաբուխ և այլն, ովկէանոս, ծով, լիճ, ծոց, նեղուց, գետ, ջրանցք և այլն), միշտ

պատկերներու և քարտէսներու գործածութեամբ։ Երկրագունդին եւ լուսնին շարժումները արեւին շուրջ ևայլն, զիշեր և ցերեկ, չորս ևղանակներ։ — Երկրագունդ քարտէսին յօրինուածքը, շրջանակին բաժանուածները, միջօրէական և հորիզոնական զիծեր կամ երկարութեան (*longitude*) և լայնութեան (*latitude*) աստիճաններ և հասարակած։ — Աշխարհի հինգ գոտինները։ — Մընոլորտ եւ մընոլորտային երեւոյթներ, (օդ, ջերմութիւն, հողմ, ամպ, անձրեւ, ձիւն, կարկուտ, փոթորիկ, որոտում, կայծակ ևայլն)։

Մարդկային ցեղեր (*ճերմակ, գեղին, սև, կարմիր*), անոնց գլխաւոր կրօնները, անոնց քաղաքակրթական վիճակը (*վայրենի, քաղաքակիրթ ցեղեր, նըստակեաց և թափառաշրջիկ*)։ Քաղաքակիրթ ցեղերու գրադումները (*նրկրագործութիւն, ճարտարարուեատ, առևտուր, գիտութիւն և գեղարուեստ*)։

Հաղորդակցութեան միջոցները (*ցամաքային, ծովային և օդային, կամուրջներ, փապուղիներ, ջրանցքներ ևայլն*)։ Աշխարհի հինգ ցամաքները։

Լիբանանի, Սիւրիոյ եւ Եւրոպայի մասնաւորապէս Ֆրանսայի քարտէսներու մասին ընդանուր նախնական ծանօթութիւններ։

ՀԱՇԻՒ, ԹՈՒԾԲԱՆՈՒԹԻՒՆ,  
ԵՐԿՐՈՉԱՓՈՒԹԻՒՆ

1. Հաշիւ գրելու կարգաւ 1-1000:

2. Բերանացի սորվեցնել գումարման և բազմապատկութեան աղիւսակները չորս գործողութիւններով վարժութիւններ ընել հարիւրէն պակաս թիւերով։

3. Գրաւոր հաշիւ. 1-1000 թուանշաններով

գործադրել չորս գործողութիւնները։ բաժանման միջոցին բաժանարարը երկու թուանշաններ աւելի ըլլալու չէ։

Բերանացի և գրաւոր դիւրին խնդիրներ։ արդարը շրջապատող և անոնց ծանօթ նիւթերով և առարկաներով։

Նախնական վարժութիւնք արտգ հաշուի և մըտաւոր հաշուի։

4. Տասնորդական (*décimal*) չափեր. Մէթր, կրամ, գրանք, լիտր ևալն, անոնց բազմապատիկները և ստորաբաժանումները։ Տեղական դրամի (*գրոշ, սոկի ևայլն*), կշիռքի (*օքա, տիրհէմ, օնս*) և երկարութեան ևայլ չափերու մասին ծանօթութիւններ։

5. Երկրաչափութիւն (*géometrie*)։ Չափել երկարութիւններ։ Աչքով չափել տարածութիւններ և չափելով ստուգել։

Ուսուցանել զիծերու (*ուղիղ, բեկեալ, կոր, հորիզոնական, զուգահեռական, ուղղահայեաց ևայլն*)։ անկիւններու, (*ուղիղ, սուր, բութ*), և երկրաչափական այլ տարրական ձևերու (*եռանկիւն, ուղղանկիւն, քառակուսի, բոլորակ կամ շրջանակ ևայլն*) հիմնական տեսակները գծելով ու գծել տալով, (*ուսուցանել գործածութիւնը քանակի, կարկինի, անկիւնաչափի ևայլն*)։

Ուղղանկիւն տարածութիւններ չափելու գաղափար տալ, քառակուսիներ գծել։

Հաստատնոցներու (*solides*) մասին (*խորանարդ, բուրդ, կոն, գլան, գունտ ևայլն*) գաղափար տալ տիպար առարկաներով (*modèles*)։

### ԻՐԱԳԻՏՈՒԹԻՒՆ

#### (Leçons de choses)

(Պատարանի մէջ եւ զբօսանքի ժամանակ)

1. Դիտողութիւն և պարզ բացատրութիւն շըրջապատող առարկաներու և երկոյթներու մասին:

Ծանօթութիւն մարդկային մարմնի մասին: Կենդանիներ, բոյսեր, նաներ, որոնք հնարաւորութեան սահմանին մէջ կամ զասարան կը բերուին և կամ պտոյտի ժամանակ տղայոց կը ցուցադրուին: Հակառակ պարագային այսպիսի դասեր կ'աւանդուին պատկերներու ցուցագրութեամբ: Բնութեան երեւոյթներ (օդ, ջուր, կրակ ևայլն), Ալորեալ կեանքին մէջ ամէնէն աւելի գործածուած առարկաներու և նիւթերու ստացման և պատրաստութեան մասին նախնական գիտելիք (ուտելիք, հագնելիք, վառելիք, թուղթ, փայտ, քար, մետաղ, բուրդ, բամբակ ևլն) (տես Տարերք զիտութեան, Հ. Ս. Մորլեան): Տարրական զասեր երկրագործութեան և պարտիզանութեան, ի հարկին օգտուելով դպրոցի և այլ պարտէզներէն: — Ծովեղերեայ քաղաքներ, ընդհանուր տեղեկութիւններ նաև ձկնորսութեան մասին: Բնապատմական առարկաներու (քար, բոյս, ծաղիկ, թիթեռնիկ ևայլն) հաւաքածոյ աշակերտներու ձեռքով պտոյտի միջոցին:

### ԳԾԱԳՐՈՒԹԻՒՆ

1. Սև և գունաւոր մատիտով գծագրութիւններ աշակերտներու առջև զրուած պարզ առարկաներու:

2. Նախապէս ցուցագրութեամբ գծուած առարկաներու յիշողութեամբ գծագրութիւն:

3. Իրագիտութեան դասերու համաձայն ազատ

գծագրութիւն: Պատկերազարդ պարտականութիւններ: Հայերէն, ֆրանսերէն, արաբերէն կարդացուած հատւածներու: պատմութեան և աշխարհագրութեան դասերու վերաբերեալ գծագրութիւններ:

4. Ազատ գծագրութիւններ դասերէն դուրս:

5. Կաղապարում (modelage):

### ԶԵՌԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՔ

#### Ա. ՏՂԱՅՈՅ ՀԱՄԱՐ

1. Զանազան վարժութիւնք ուսողութեան arithmétique), երկրաչափութեան և գծագրութեան ուսուցման օժանդակելու համար:

2. Զանազան երկրաչափական ձևեր, գունաւոր թուղթէ երիզակներով և խաւաքարտով:

3. Դործնական կեանքի անհրաժեշտ վարժութիւններ, կոճակ կարել, ծրարներ և տուփեր շինել, զրոքերուն և տերարկներուն երես անցնել ևայլն:

4. Զանազան տարրականներ շինել (տուփ, կողով, ևայլն):

#### Բ. ԱՂՋԻԿՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

1. Մանչերու վերոյիշեալ վարժութիւններէն դիւրագոյնները:

2. Սովորական կարի տարերքը, շարկար, յետկար, շեղկար, թելզակ (point de sujet), կցակար կամ զարդակար (point de piqûre), խծեպ: Վարժութիւնք քանըվայի (canevas) և կոշտ կտաւի (toile) վըրայ: Վարժութիւնք պարզ առարկաներու վրայ (թաշկինակ, երեսորբիչ, անձեռոց, պուպիկներու և պէպէքներու ձերմակեզն ևայլն):

3. Ուսուցում թելզրի (targue) քանէվայի վրայ, վարժութիւնք տառերու, թուանշաններու ևլն:

4. Կարկտուք (*recommodage*), մանաւանդ կոճակներ և ճարմանդներ (*agrafes*) տեղաւորել:

5. Հիւսակում օղածոյ կամ գուլպայակերպ հիւսածք (*tricot*), ընդհանուր ուսուցում օղածոյի (*maille*) պարզ վարժութիւնք փայտէ կրկնակի ճաղերով (ասեղներով, *aiguilles*):

6. Կոսոնեղ (*crochet*), պատրաստութիւն վզնոցի (*cache - nez*) ևայլն:

### ԵՐԳ

1. Դպրոցական երգեր ուսուցանել ունկնդրութեամբ:

2. Քանի մը եկեղեցական պարզ երգեր ունկնդրութեամբ:

3. Զայնի և ականջի կամ լսողութեան մարզանք: Ուսուցում ձայնիրու (*sous*) և խաղերու ձայնաշարի (*gamme*), զագարի, զծաշարի (*portée*):

4. Ուսուցում ձայնի տևողութեան, *ronde, blanche, noire, croche* և համապատասխան դադարենք: Երիաբանակ, հոամանակ և քառամանակ չափեր:

### ՄԱՐՄԱՐԱՐՁ

1. Պարզ մարմամարզանք, շրջպար երգով:

5. Նմանողութիւն (*imitation*) իսպեր և շարժումներ:

3. Կրթիչ և ուղղիչ մնջկատակաւոր մարզանք:

4. Հաւաքական կարճ իսպեր:

5. Շնչառական իսպեր և մարզանք:

(9—11 ՏԱՐԵԿԱՆՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ)

### ԿՐՈՆ

ԵՒ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

1. Նոր կտակարանի պատմութիւններ և Քրիստոնէական վարդապետութեան հիմնական սկզբունքները դիւրամատչելի ձեւով:

2. Հայ եկեղեցւոյ պատմութեան զլխաւոր շըրջանները կուսաւորիչն սկսեալ մինչեւ Ռուբինեանց անկումը, ծանրանալով գլխաւորապէս մեծ հայրապետներու գործունէութեան, ոսկեղարու և հայ եկեղեցւոյ ազգային նկարագրին վրայ (շեշտել հայ եկեղեցւոյ մատուցած ծառայութիւնները մանաւանդ ազգային գրականութեան, գեղարուեատին ևլն):

3.— Հայ եկեղեցւոյ վարդապետութեան հիմնական սկզբունքները (խորհուրդներ, տօներ, «Հաւատամք»ը ևայլն):

### ԲԱՐՈՒՑԱԿԱՆ

1. Բնթերցումներ և խօսակցութիւնք անհատական գլխաւոր առաքինութեանց մասին (չափաւորութիւն, աշխատասիրութիւն, անկեղծութիւն, ճշմարտախօսութիւն, համեստութիւն, արիասրաւութիւն, համբերատարութիւն (կրօնական և գաղափարական), բարութիւն ևլն, և ընկերային կեանքի հիմնական պարտականութեանց մասին (ընտանիք և հայրենիք) աւելի մանրամասնելով:

2. ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԶԳԱՅՈՒՄ ԻՐ ԱՆՁԻՆ ՀԱՆԴիՇՊ. — Նախ մարմնական մաքրութիւն, առողջութիւն, ոյժ ևլն, ապա՝ հոգեկան, բարութիւն, աշխատափրութիւն, արիութիւն վտանգի և տագնապի միջոցին, անկեղծութիւն, ճշմարտախօսութիւն, հաշ-

մեստութիւն, իր թերութիւնները ճանչնալ և ուղղել, հպարտ եւ սնապաշտ, ծոյլ և տղէտ, կոշտ ու ոխակալ չ'ըլլալ, անձնիշխանութեան և նախաձեռնութեան ոգի:

Բ. ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԶԳԱՅՈՒՄ ԾՆՈՂԱՅ ԵՒ ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆԴԱՄՆԵՐՈՒՆ ՀԱՆԴԵՊ.— Հանդանդութիւն, յարգանք, սէր և երախտագիտութիւն ծընողաց հանդէպ, օգնել անոնց աշխատութեամբ և հիւանդութեանց միջոցին. ինամել զանոնք ծերութեան միջոցին; Սիրել և խնամել քոյրերն և եղբայրները և բարի օրինակ ըլլալ անոնց:

Գ. ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԱՅԼՈՅ, ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԵՒ ԱԶԳԻՆ ՀԱՆԴԵՊ.— 1) դպրոցական պարտիք. Կարգապահութիւն, աշխատասիրութիւն և յասաջղիմութիւն, ընկերութիւն, յարգանք, սէր եւ հնազանդութիւն ուսուցիչներու հանդէպ; 2) բնկերային, ազգային եւ ֆարավացիական պարտիք. Օգտակար ըլլալ ընկերութեան եւ ազգին, նիւթապէս եւ բարոյապէս. յարգանք և հնազանդութիւն օրէնքի և իշխանութեանց հանդէպ. յարգանք ու բիշներուն անձին, զոյքին, հաւատքին, զաղափարին եւ բարի համբաւին;

Դ. Կրօնա-բարոյական պարտականութեանց կատարում եւ կատարելութեանց տիպար Աստուծոյ սէր եւ պաշտամունք:

## ՀԱՅԵՐԵՆ

1. ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ.— Անուն և տպաւորիչ ընթերցում զանազան գրական ու բանաստեղծական հատուածներու, բացատրութեամբ զժուարին բառերուն եւ ընդհանուր իմաստին:

2. ԳՐՈՒԹԻՒՆ.— Վարժ եւ զեղեցիկ գրութիւն շեղագրի, բոլորագրի եւ մեծատառերու:

3. ԱՐՑԱՍԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ՅԻՇ ՈՂՈՒԹԵԱՆ ՎԱՐԺՈՒԹԻՒՆ.— Տպաւորիչ արտասանութիւն եւ դոց ուսուցում առակներու, ոտանաւորներու եւ հատընտիր արձակ հատուածներու:

4. ԲԱՍԹԱԳԻՏՈՒԹԻՒՆ.— Հոմանիշեր, եւ հականիշեր բառերու, ընտանիքներու եւ կաղմութիւններ (ածանցներ, բարդութիւններ եւալլն):

5. ՊԵՐՃՈՅԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՎԱՐԺՈՒԹԻՒՆ.— Ուսուցչին կողմէ պատմուած կառոններու եւ դասարանի մէջ կարգացուած հատընտիր հստուածներու գրական մաքուր լեզուով եւ ընտրեալ բառերով եւ ոճերով վերապատմութիւն կամ վերարտագրութիւն:

6. ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ.— Բառերուն տեսակները կամ որ մասունք բանիններուն պատկանիլը: Անուններ կամ որ մասունք անուններու եւ գերանուններու: Դերանուններ եւ ածականներ: Բայերու տեսակներն ու խոնարհումը ներգործական, կրտորակ ոն, չեղոք, դերանուանական եւալլն բայերը: Դերայի գործածութիւնը, նախագրութիւն եւ մակրայ, շաղկապ եւ միջարկութիւն: Նախագաւութիւններ եւ անոնց տեսակները, պարբերութիւններ և անոնց յօրինուածքը, վերլուծական գարժութիւններ:

7. ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԿԵՏԱԴՐՈՒԹԻՒՆ.— Նախապատրաստուած եւ անպատրաստի թելազրութիւններ:

8. ՊԱՐԲԵՐՈՒԹԵԱՆՑ ԳԻՒԺԻ ԵՒ ԿԱԶՄՈՒԹԵԱՆ ՎԱՐԺՈՒԹԻՒՆ.— Պարզ խմբագրական կամ շարագրական գարժութիւնք (իրազիտական կամ պատմական նիւթեր, պարզ նկարագրութիւններ, բարոյական կամ կրօնական պարզ հատուածներ):

## ՀԱՅՈՅ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

1. Հին Հայաստանի բնակչութիւնը, վարչական կազմը, թագաւորութիւն, կաթողիկոսութիւն, նախարարութիւններ եւայլն։ Հին հայերու առեւտուրը, արդիւնաբերութիւնը, քաղաքակրթութիւնը, նեայլն։ Անոնց ձգած յիշատակարանները (քաղաքներ, վանքեր, ձեռագիրներ եւայլն)։

2. ՀԱՅՈՅ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԻՆ։ — Հայոց ծգրիստամութիւն Սրբակունիներէն սկսելով եւ միայն պատմական կարեւոր դէպքերու դիւրամատչելի աւանդումով, մինչեւ Ծուբինեանց անկումը, մասնաւորաբար ծանրանալով Տիգրան մեծի, Խոսրովի եւ Տրդատի եւ Քրիստոնէութեան Պետական Կրօն գառնալուն, ոսկեղարու, Վարդանանց պատերազմի, Արաբական տիրապետութեան, Բագրատունեաց, Ծուբինեանց (իսչակիրներու հետ առնչութիւն) մեծ երեւոյթներուն վրայ։ (Մասնաւորուշագրութիւն դարձնել Ֆրանսայի և Հայոց յարաբերութեանց վրայ խաչակիրներու օրով)։

## ՔՐԱՆՍԵՐԷՆ

1. ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ։ — Սահուն եւ արտայայտիչ ընթերցանութիւն, դժուարին բառերու և կարդացուած հատուածին իմաստին բացատրութեամբ։

2. ԳՐՈՒԹԻՒՆ։ — Սովորական նոտր գրով (cursive մեծ, միջակ եւ փոքր) գրութիւն։

3. ԱՐՑԱՍՍԱՆՈՒԹԻՒՆ։ — իմաստին համաձայն արտայայտիչ կերպով արտասանել դոց ուսուած պարզ առակներ, ոտանաւորներ եւ քանի մը կարճ արձակ կտորներ։

4. ԲԱՌԱԳԻՑԱԿԱՆ ՎԱՐԺԱԴՈՒԹԻՒՆՆԵՐ։ — հոմանիշ եւ հականիշ բառեր, բառերու ընտանիքներ։

5. ԳԵՐՃԱԲԱՆՈՒԹԻՒՆ (élocution) վարժութիւններ, արտայայտիչ կրկնութիւն բերանացի պատմուած պարզ պատմութեանց, բերանացի ամփոփում դասա-

բանի մէջ կարդացուած պարզ հատուածներու։

6. ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ։ — Բառերու տեսակները (8 մասունք բանի)։ բայերու խոնարհումը (ներգործական (actif), կրաւորական (passif), զերանուանական (pronominale)ձեւերը). անցեալ դերբայի (participre) ընդհանուր օրէնքները։ Նախագրութիւններ և մակրայ. շաղկապ եւ միջարկութիւն (interjection)։ Անուան լրացուցիչներ (յատկացուցիչ, յատկացեալ ևն.) նախագասութիւններ, վերլուծական վարժութիւնք։

7. ՈՒՂԴԱԳՐՈՒԹԻՒՆ։ — ԿԵՇԱԴՐՈՒԹԻՒՆ։ — Նախապատրասուած եւ ստուգող թելագրութիւններ (diction)։

8. Վարժութիւններ նախագասութիւններ եւ պարբերութիւններ կերտելու եւ հնարելու։ Խմբագրութեան պարզ վարժութիւններ։

9. Ֆրանսերէնէ Հայերէն եւ Հայերէնէ ֆրանսերէն թարգմանելու հետզհետէ զժուարին վարժութիւններ։

## ԱՐԱԲԵՐԷՆ

1. ԸՆԹԵՐՑՈՒՄ։ — Սահուն ընթերցում դիւրամատչելի հատուածներու, գժուարին բառերու և ընդհանուր իմաստին բացատրութեամբ։

2. ԳՐՈՒԹԻՒՆ։ — Մասնաւոր ուշագրութիւն դարձնել գրերու զանազան ձեւերուն ուղիղ եւ գեղեցիկ գրութեան։ մելանով ընթացիկ գրութիւն։

3. ԱՐՑԱՍՍԱՆՈՒԹԻՒՆ։ — Մասնաւոր ուշագրութիւն զարձնել արաբական հնչիւններու ուղիղ արտասանութեան։ Յստակ, ուղիղ եւ տպաւորիչ արտասանութիւն, պարզ արձակ ոտանաւոր հատուածներու բառերն ու իմաստը հիմնովին բացատրելէն ետքը։ Գոց ուսուցում եւ արտասանութիւն նոյն կտորներու։

4. ԲԱՌԱԳԻՑԱԿԱՆ ՎԱՐԺԱԴՈՒԹԻՒՆ։ — Հոմանիշ և հականիշ բառեր եւ բառերու ընտանիքներ։

5. ՊԵՐՃԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹԻՒՆՔ.— Պարզ պատմական կամ նկարագրական կարծ բացատրեալ հատուածներու պատմութիւն աշակերտներու կողմէ ընտիր բառերու եւ ոճերու գործածութեամբ։

6. ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆՔ.— Բառերուն տեսակները (մասունք բանի): Շարունակութիւն երատառ ներգործական և կրաւորական բայերու խոնարհումին. քառատառ, երկտառ կամ խուլ (չ) եւ համզառնեցող, տկար (չ) եւայլն բայեր, Անուններուն տեսակները, բայերէ եւ անուններէ կազմուած անուններ։ Ածականի համաձայնութիւնը անուան հետ, Յոդնակիի տեսակները, գերբայի գործածութիւն, թուական, անուններ, գերանուններ, նախադրութիւն, մակրայ. չաղկապ եւ միջարկութիւն։ Նախակասութիւն. Անուանական եւ բայեկան նախադրութիւններ. պարբերութիւններ. վերլուծական վարժութիւնք։

7. ՈՒՂԴԱԳՐՈՒԹԻՒՆ. ԵՒ ԿԵՏԱԳՐՈՒԹԻՒՆ.— Նախապարասուած եւ պարզ անպատրաստ թելադրութիւններ։

8. Նախադասութիւններ եւ պարբերութիւններ կազմելու վարժութիւններ ուսուցուած բառերու և քերեկանական օրէնքներու համաձայն։

9. Թարգմանութիւններ՝ հայերէնէ եւ ֆրանսերէն արաբերէնի եւ ընդհակառակը թարգմանութիւններ պարզ պարբերութեանց և փոքրիկ պատմուածներու։

### ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

1. ԼիբԱՆԱՆ ԵՒ ՍՈՒՐԻԱ. — Ամփոփ կրկնութիւն նախընթացին, տիրող ժողովուրդներու ձգած քաղաքական յիշատակարաններու պարզ նկարագրութեամբ եւ պատկերներու ցաւցադրութեամբ (մանաւանդ Պատլպէք եւ Բալմիր եւն). պատահական տի-

րապետութիւն եւ քաղաքակրթութիւն, խաչակիրներ եւ անոնց ձգած հետքերը եւ հայոց գործակցութիւնը։ Թրքական տիրապետութիւն. Լիբանանի ինքնավարութիւնը թրքական տիրապետութեան միջոցին մինչեւ ընդհանուր պատերազմը 1914։

2. ԹՐՈՒՆՍԱՑԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ. — 1610էն սկսեալ ֆրանսայի պատմութեան գլխաւոր մեծ դէպքերը եւ հիմնական թուականները, բացարձակ միապետութիւն հին պետութեան վախճանը, ֆրանսական յեղափոխութիւն, հիւպատուութիւն (consulat) եւ կայսրութիւն (emprise). վերհաստատութիւն (restoration). Սահմանագրական թագաւորութիւն, երկրորդ հանրապետութիւն, երկրորդ կայսրութիւն, երրորդ հանրապետութիւն, ընդհանուր պատերազմ (1914—18):

### ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

1. ՀԻՆԳ ՈՎԿԻԱՆՈՍՆԵՐ ԵՒ ՀԻՆԳ ՑԱՄԱՔՆԵՐ. — Եւրոպայի ամփոփ աշխարհագրութիւնը և հանրնակող ազգերը և անոնց գաղթավայրերն ու արտագրութիւնները։ Ասիոյ աշխարհագրութիւնն ու բնակիչները և անոնց բնական հարստութիւնները։ Ափրիկէի աշխարհագրութիւնը ու բնակիչները և անոր բնական հարստութիւնները։ Ամերիկայի աշխարհագրութիւնն ու բնակիչները և անոնց արտագրութիւնը։ Աւստրալիա կամ Ովկէանիա։ Աշխարհի վրայ գոյութիւն ունեցող կրօններու մասին ընդհանուր տեղեկութիւններ։ Ազգ և հայրենիք, պետութիւն և կառավարութիւն։

2. ԼԻԲԱՆԱՆԻ ԵՒ ՍՈՒՐԻԱՑ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ. — Գլխաւոր լեռներն, գետերն ու գաշտերը ելն։ Այս երկիրներու բնակիչներն ու անոնց ցեղային ու կրօնական բաժանումները։ Լիբանանի և

Սուրիոյ արտադրութիւններն ու առևտուրը: Լիբանանի և Սուրիոյ քաղաքական բաժանումները և այժմեան վարչական յօրինուածքը եւն:

3. Ֆրանսայի աշխարհագրութիւնն ու գաղթագայրերը:

4. Քարտիսագծական վարժութիւններ գրատախտակի, քարետախտակի վրայ և տետրակի մէջ:

### ՀԱՇԻԻ, ԹՈՒԱԲԱՆՈՒԹԻՒՆ, ԵՐԿՐՈՋԱՓՈՒԹԻՒՆ

1. ԹՈՒԱԲԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՇԻԻ. — 1) Թուաբանական չորս գործողութիւններ աւելի մեծ թուանշաններով քան տարրական դասարաններու մէջ: Թարդթիւեր գրել ու կարդալ: Ժամանակի բաժանումներ, դար, տարի, ամիս, շաբաթ, օր, ժամ, վայրկեան, երկվայրկեան, շրջագծերու (circconference) հաշիւներ (ասունան, վայրկեան, երկվայրկեան). շրջանակի հաշիւններ:

2) Տասնորդական պատճենական չափերու դրուներ 10ի 100ի 1000ի հիման վրայ: Բազմապատճեներ (multiples) և ենթարազմապատճեններ (sousmultiples), տեղական չափեր և անոնց յարաբերութիւնը դրանսական ու եւրոպական չափերու համեմատութեամբ:

3) Մակերեւոյթի (surface) հաշիւններ, ուղղանկիւն, քառակուսի, եռանկիւն, շրջանակ (cercle):

4) Ծաւալի եւ պարունակութեան (volume) չափեր, ուղիղ հատուածակողմ (prisme) ուղղանկիւն խարիստով (base), խորանարդ (cube), գլան (cylindre):

5) Տասնորդական թիւեր եւ կոսորտակներ. ընդունութիւնը գաղափար պարզ կոտորակներու մասին: Զորս գործողութիւնք պարզ կոտորակներով և փոքր թիւե-

րով: Խնդիրներ սովորական կեանքէ նկատի առնելով նաև տեղական գործնական կեանքի մէջ ընդհանրացած չափերը, կշռները, դրամները եւն: Երրեակի և տոկոսի կանոնները և վարժութիւնք:

6) Վարժութիւնք տասնորդական կոտորակները պարզ կոտորակներու վերածելու ու ընդհակառակը: Զորս գործողութիւնք տասնորդական կոտորակներով:

7) Շարունակել արագ և մտաւոր հաշուի վարժութիւնները:

2. ԵՐԿՐԱՋԱՓՈՒԹԻՒՆ. — 1) Դէմյանդիմանական ուսուցում և պատկերացում հարթաչափութեան (géometrie plane) պատկերներու և ձեերու (figure) զծագրութեամբ:

2) Տարրական ծանօթութիւններ տրուած չափանիշի (échelle) մը համաձայն տարրածութիւններ պատկերացնելու կամ գծելու յատակադիմ մը կամ քարտէս մը:

3) Բազմանկիւնք. Եռանկիւններու և քառակուսիներու տեսակները, անոնց գլխաւոր յատկութիւնները: Անոնց գծումն ու տարրածութեան չափը:

4) Տարրական ծանօթութիւններ երկրաչափական պարզ հաստատնոցներու (solides) մասին (խորանարդ, բուրգ, ուղիղ հատուածակողմ (prisme droit), բլան ելն), ու պարզ տեղեկութիւններ անոնց երկրաչափական զծագրութեան և անոնց հիմնական յատկութեանց մասին:

5) Շրջագիծ և շրջանակ և անոնց աստիճաններու բաժանումը, շառաւիղ, տրամագիծ, լար, աղեղ, հատանող, շօշափող ելն:

6) Շրջանակի մէջ զծուած քառակուսիներ և կանոնաւոր վեցանկիւններ և եռանկիւններ:

### ԻՐԱԳԻՑՈՒԹԻՒՆ

(Դաստիանի մեջ եւ զրուական պտոյսներու ժամանակ)

1. Ընդհանուր ծանօթութիւններ մարմիններու երեք վիճակներու մասին (կարծր, հեղուկ, կազային): Մանօթութիւններ ջուրի, օդի և կաղերու մասին, ջրածին (hydrogène), թթուածին (oxygène) և ածխածին (gas carbonique): Պարզ մարմիններ, բարդ մարմիններ, օդ, մթնոլորտային ձնչում, ջերմութիւն, ձրգողութիւն, ծանրութիւն ելն: Փորձառական ցուցմունք պարզ գործիքներով: Գլխաւոր մետաղներ և անոնց գործածութիւնը (երկաթ, պողպատ, պղինձ, անագ, զինկ, ոսկի, արծաթ ելն):

2. Մարդ. Ընդհանուր նկարագրութիւն մարդկային մարմի մասերուն, և ընդհանուր զաղափարկենական գործարաններու գործունէութեան:

3. Անասուններ. Ընդհանուր տեսութիւն անասուններու զանազան դասակարգերու մասին: Ողնայարաւոր և անողնայար անասուններու դասաւորումը, անոնց զանազան դասակարգէն կենդանի մը իբր տիենդանիներով: Տեղական օգտակար և վնասակար

4. Բնյաեր. բոյսերու ընդհանուր գործարանաւորական կեանքի մասին գաղափար: Ընդհանուր ծամասին, ամէն դասակարգէ բոյս մը իբր տիեպար օրիբոյսեր:

5. Ուսուցում տնային տեսեսութեան, (աղջիկներու համար) գործնական զբաղմունք խոհանոցի և տնային մաքրութեան,

6. Առողջապահութիւն, գործնական վարժութիւնք, մաքրութիւն մարմի, զգեստներու և զա-

սարանի: Առողջապահական ընդհանուր գիտելիք, մանաւանդ տղայոց միջավայրին պայմանները նկատի առնելով:

7. Երկրագործութիւն եւ պարտիզանութիւն, ընդհանուր գիտելիք հողի մշակման, մշակելի բոյսերու և ծառերու, հողի պարարտացման միջոցներու, հողագործական աշխատանքի և երկրագործական գործիքներու մասին: Տեղական երկրագործութեան և պաղամշակութեան մասին ընդհանուր գիտելիք:

### ԳԾԱԳՐՈՒԹԻՒՆ

1. Գծագրութիւն սե և գունաւոր մատիտներով սովորական պարզ առարկաներու, մանաւանդ կենդանական և բուսական աշխարհէն առնուած նմոյշներու:

2. Գծագրութիւն յիշողութեամբ:

3. Իրացիտական և պատմական և այլ դասերէն քաղուած նիւթերու ելն բացատրական գծագրութիւն: Պատկերներով պարտականութիւններ: Տարրական զարդանկարչական վարժութիւններ: Ազատ գծագրութիւն դասէն գուրս (մատիտ, բասել, ջրանկար): Ընդօրինակութիւն: Երկրաչափական գծագրութիւն, ուրուագծում, (գծագրութեան մասին մանրամասնութիւններ տեսնել նախակրթարաններու հրահանգին մէջ):

### ԶԵՌԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆ

(Տղայոց համար)

1. Շարունակութիւն երկրաչափական զանազան ձևեերու կազմութեան այլեւայլ նիւթերով. Երկրաչափական հաստատուցներու և զանազան առարկաներու շինութիւն: Խաւաքարտ և անոնց զրուա-

գումը գունաւոր թռւղթով և կամ ներկուած գծագրութիւններով։

2. Գործնական կեանքի պատրաստութիւն. ըգ-  
գեստի մը կարերը քակել, գիրք մը վերակազմել,  
տետրակներ չինել և լին:

3. Φωρρά διπρόδικον κέρποντας αγίους την περιφέρειαν της Αθήνας, οι οποίοι μεταστράφησαν σε θρησκευτική ιδέα, η οποία επηρέασε την αρχαία Ελληνική πολιτισμό.

5. Գիտական փորձեր, և մարզանքներ պարզ գործիքներով:

6. Արհեստագիտական ծանօթութիւններ սովորական գործիքներու մասին :

## ԱՀՋԻԿՆԵՐՈՒՄ ՀԱՄԱՐ

1. Մանչերու վերոյիշեալ աշխատութեանց մէկ  
ժամ:

2. Քանէվայի և կոչտ պաստառի (grosse étamine) վրայ թերզիր, տառեր և թուանաններ :

3. Ապարական կար, պարզ կար, շարկար, յետկար, չեղկար, չուրջկար, խծեպ (curllet), թելտակ կամ թելտոկ թէյել (couture en surjet), խաչկար, պարզ, կրկնակ և վերամած կոր գծի գարգութիւնք:

4. Կարկտանք (*recommodage*). գուլպայ, թեզ-զանիք, ցանցակիրպ հիւսուածք:

5. Օղածոյի (tricol) վարդութիւնք, փողապահի կամ վզնոցի (cache-col) հիւսուածք եւն:

6. Կեռասեղ (crochet) շարունակովթիւն նախորդ վարժութեանց, պղտիկ կտաւակներ (jupons) և լին:

፲፭፭

1. Դպրոցական երգեր ուսուցանել ունկնդրութեամբ:
  2. շարունակութիւն նախորդ ուսուցման և վարժութեանց նոր տարրերով (croche, double croche, noire pointée) և համապատասխան դադարներ (silence):
  3. Ոլորակում (tonalité) և եղանակաւորում (modes majeur, mineur):
  4. Խազերու (notes) ընթերցում, խազերգում (solfège) և երգ միաձայն կամ բազմաձայն:
  5. Քանի մը եկեղեցական և ազգային երգեր և ամփոփ տեղեկութիւն հայ երաժշտութեան մասին:
  6. Ֆրանսական և Լիբանանեան քայլերգներ:

ՄԱՐՄՆԱՄԱՐՁ



# ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԴԱՍԸՆթԱՑՔ (11—13 ամբողջական)

քական եկեղեցիներ: Միսիոնարութիւնը: Անոնց հայոց մէջ ունեցած գործունէութիւնն ու կազմակերպութիւնները (ամփոփ և դիւրամատչելի ձևով): Քրիստոնէական կրօնի հիմնական սկզբունքները:

2. Քրիստոնէական եկեղեցւոյ առաջին մեծ կամ տիեզերական ժողովները և հայրապետները: Հայ եկեղեցւոյ միւս եկեղեցիներէն ունեցած տարբերութեանց մասին ընդհանուր գաղափար:

3. Հայոց եկեղեցական պատմութեան կարեւոր շրջանները, Ռուբինեանց անկումէն սկսեալ մինչև մեր օրերը և այժմեան հայ եկեղեցւոյ, մանաւանդ կիւլիկան կաթողիկոսութեան վարչական կազմակերպութիւնը: Հայ եկեղեցւոյ մատուցած ծառայութիւնները մեր ազգային գոյութեան և մշակոյթին (տառերու գիւտ, գրականութիւն, պատմութիւն, զիտութիւններ, գեղարուեստ և այլն):

4. Հայ եկեղեցւոյ վարդապետութիւնը:

### ԲԱՐՈՅԱԿԱՆ

#### ԵՒ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԿՐԹՈՒԹԻՒՆ

1. Խիզ և բնաւորութիւն, կրթութիւն իր անձին, բարոյական և քաղաքացիական կրթութիւն, արդարութեան և ընկերային համերաշխութեան զանազան երեւոյթները:

2. Տարրական տեղեկութիւններ լիբանանի, Սուրբոյ և Ֆրանսայի քաղաքական վարչական և գատական կազմակերպութեան մասին: Քաղաքացիութիւն: Քաղաքացիին իրաւունքներն ու պարտականութիւնները: Օրէնքի հնազան գութիւն: Հանրային շահի նուիրում, հայրենիքի սէր, մարդկութեան սէր:

### ՀԱՅԵՐԵՆ

1. ԸՆԹԵՐՑՈՒԹԻՄ.— Կատարեալ տպաւորիչ ընթերցում իմաստին և կէտադրութեան համաձայն, բացատրութեամբ ոչ միայն կարգաթուած հատուածներու իմաստին, այլ նաև անոնց գրական գեղեցկութեան:

2. ԳՐՈՒԹԻՒՆ.— Անթերի և գեղեցիկ գրութիւն գրերու բոլոր տեսակներուն:

3.— ԳՐԱԿԱՆ ՍԵՌԵՐ ԵՒ ՈՃ.— Ընդհանուր պարզ տեղեկութիւններ գրական սեռերու և ոճի մասին:

4. ԱՐՏԱՍՄԱՆԱԽԹԻՒՆ.— ԵԽՇՈՂՈՒԹԻՒՆ.— Յոյժ տպաւորիչ արտասանութիւն, արձակ, ստանաւոր թատերական հատընտիր հատուածներու և ի հարկին անոնց գոց ուսուցումը:

5. ԲԱՌԱԳԻՏԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹԻՒՆՔ.— Բառերու ընտանիքներ և անոնց ամէն տեսակի ածանցումներն ու բարդութիւնները (ածանցներու տեսակցումներն ու իմաստները, բարդութեանց տեսակներն ու ներն ու իմաստները), բառերու բուն ու փոխադրական կամ կանոնները), բառերու բուն ու փոխադրական իմաստները:

6. ՊԵՐՋԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹԻՒՆՔ.— Ընթերցումներու, գասերու, պատուաներու, փորձերու և լին գրական մաքուր լեզուով և ընտիր ոճով նկարագրութիւն կամ պատրուածք:

7. ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ.— Անկանոն բայեր, համաձայնութեան (syntaxis) մասին ընդհանուր հիմնամականացիք, նախադասութեանց զանազան ձևերը, կան գիտելիք, նախադասութեանց զանազան և բառերու գերն ու պաշտօնը նախադասութեանց և ասոնց գերը պարբերութեանց մէջ. Եղանակներու և ժամանակներու գործածութեան զիսաւոր օրէնքները, և գերլուծական վարժութիւնք:

8. Ուղղագրական թելագրութիւններ քերականական օրէնքներու գործադրութեամբ:

9. ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԵՒ ՇԱՐՍԴՐԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹԻՒՆԵՐ. — Նկարագրութիւն, պատմուածքներ, նամակներ անձնական, առևտրական և պաշտօնական ելն. քերականական օրէնքներու գործադրութեամբ:

10. Ընդհանուր գաղափար հայ լիզուի ծագման և գրաբար հայերէնի և հին ու նոր և մանաւանդ արդիական հայ գրականութեան մասին:

### ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

1. Ներկայ Հայաստանի աշխարհագրութիւն. Ներկայ Հայաստանի սահմանները, վարչական կազմն ու բաժանումները, հաղորդակցութեան միջոցները, գլխաւոր քաղաքները, բնակչութիւնը, ճարտարարուեամբ, արդիւնաբերութիւնը, վաճառականութիւնը, քաղաքակրթութիւնը, ելն. Հայաստանի այժմեան գրացի ազգերը:

2. ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ. — Ռուբիննեանց անկումն մինչև մեր օրերը, մասնաւորապէս ծանրանալով հայ-թաթարական-սելմուկեան և մանաւանդ հայ-թրքական, հայ-պարսկական և հայ-ոռւսական յարաբերութեանց վրայ մինչև մեր օրերը: Հայ ազատագրութեան փորձեր և անոնց անյաջողութեան պատճառները: Հայ հանրապետութեան ծագումն և անոր արդի վիճակը: Հայ գաղութներ և անոնց եկեղեցական վարչական և այլ կազմակերպութիւնները: Հայ գաղութներու մէջ հայերը հաւատարիմ քաղաքացիներ պէտք է ըլլան տեղական և հոգատար կառավարութեանց:

### ՔՐԱՆՑԵՐԵՆ

1. ԸՆԹԵՐՑՈՒԹԻՄ. — Տպաւորիչ ընթերցում, բացատրութիւններով ոչ միայն կարդացուած հատուա-

ծին իմաստը հիմովին հասկցնելու, այլ մանաւանդ ընտիր հատուածներու գրական արժէքը և գեղեցկութիւնները բացատրելու գիտումով:

3. ԳՐԱՅԻԹԻՒՆ. — Շեղագիր կամ նոտրգիր (cursive), բոլորգիր (ronde), միջնագիր (bâtarde):

3. ԱՐՑԱՍՍՆՈՒԹԻՒՆ. — Տպաւորիչ արտասահնութիւն, հատընտիր արձակ և ոտանաւոր հատուածներու և զասական թատերական գրութեանց:

4. ԲԱՅԱԳԻՑԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹԻՒՆ. — Բառերու ընտանիքները և անոնց կազմութեան տարրերը: Բուն և պատկերաւոր իմաստներ:

5. ԳԵՐՃԱԲԱՆՈՒԹԻՒՆ. — ՎԱՐԺՈՒԹԻՒՆ. — Ընթերցումներու, գասերու, զբոսական պտոյտներու, լինֆերցումներու, գասերու, զբոսական պտոյտներու և լին. զրական փորձառական կեանքէն պատկերներու և լին. զրական արտայայտութիւն կամ նկարագրութիւն:

6. ԳԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ. — Անկանոն բայեր. Նամաձայնութեան մասին հիմնական գիտելիք, նախադասութեանց զանազան տեսակներ. բառերու պաշխագասութեանց նախադասութեանց և նախադասութեանց պաշտօնը նախադասութեանց (phrasé) մէջ: Բայերու եղատոնը պարբերութեանց (phrasage) մէջ: Բայերու եղատոնը պատճառակներու գործածութեանց գիտանկաները: Կանոնները: Կերլուծական վարժութիւնք (analyse): ւոր կանոնները: Վերլուծական վարժութիւնք (dictée):

7. ՌԵՋԱԳՐԱԿԱՆ թելագրութիւնք (dictée): 8. ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹԻՒՆ (réécriture)

9. ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ. — Ապահովածք, նամակներ, մանաւանդ առևտրական նամակներ և լին:

9. Թարգմանութիւնք, հայերէնէ գրանսներէն հատուածներու:

### ԱՐԱԲԵՐԵՆ

1. Շարունակութիւն նախընթաց վարժութեանց.

2. ԸՆԹԵՐՑՈՒԹԻՄ. — Անթերի ընթերցում հա-

տընտիր արձակ և ոտանաւոր հատուածներու, բառե-

բու, ոճերու և իմաստին բացատրութեամբ:

3. ԳՐՈՒԹԻՒՆ. — Վարժ, ընթացիկ գրութիւն

և գաղափար արաբական գրութեանց զանազան ձեւերուն:

4. ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ. — Անսխալ արտասահատիւն արձակ և ոտանաւոր բացատրեալ հատրնտիր հատուածներու, և գոց ուսուցում ընտիր կտորներու:

5. ՊԵՐՋԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐԺԻԹԻՒԽԻՆՔ. — Պարզ հատուածներու վերաբառութիւն, ուսուցչին արտասահած պատմուածներու բերանացի և գրաւոր կրինութիւն ընտիր բառերու և ոճերու գործածութեամբ:

6. ԲԱՌԱՋԻՑԱԿԱՆ. — Բառերու ընտանիքներ և զանոնք կազմող ածանցներն ու մասնիկները: Բառերու իրական և փոխաբերական իմաստը:

7. ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ. — Շարունակութիւն նախընթաց ծանօթութեանց մասունք բանիներու, մասնաւանդ անուններու և բայերու յօրինուածքի մասին: Նախագասութիւններու տիսակներ, պարբերութիւններ: Արաբական բայերու ժամանակներու գործածութեան զանազան նշանակութիւնները, և անոնց ժամանակներու եւ եղանակներու հայերէնի և ֆրանսերէնի համապատասխան արժէքները. կատարեալի և ապառնի գործածութիւնը, բայերու եղանակները: Բայի և ենթակայի համաձայնութիւն: Սեփ և բնութեան խնդիրներ: Համաձայնութիւն (syntaxe) բայերու, անուններու և միւս մասունք բանիներու:

8. ԹԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ. — Ուղղագրական և քերականական թեղագրութիւններ:

9. ՇԱՐԱԴՐՈՒԹԻՒՆ. — Պատմուածք, նամակներ, պարզ նկարագրութիւններ եւն:

10. ԱՐԱԲԵՐէՆՔ հայերէն և ֆրանսերէն թարգմանութիւններ և ընդհակառակը:

11. Վերլուծական և բերակնեն, վարժութիւնք:

### ԸՆԴՀԱՅՈՒԹԻՒՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

1. Լիբանանի և Սուրիոյ պատմութեան զիխաւոր գէպքերը, թուրքերու արիապետութենէն սկսեալ մինչեւ մեր օրերը, ծանրանալով մանաւանդ վերջին մեծ պատերազմին յաջորդող շրջանին վրայ:

2. Ընդհանուր տեղեկութիւններ Յունաց և Հոռվմայեցւոց մասին, անոնց յարաբերութիւնները հայոց հետ: Ընդհանուր ծանօթութիւններ հին եգիպտացիներու, ասուրիներու և բաբելոնցիներու մանաւանդ արաբական կայսրութիւնն մասին:

3. Ֆրանսայի պատմութեան հետ ունեցած առնչութիւններով մինչեւ մեր ժամանակները, գրուազներ այժմ եան մեծ ու քաղաքակիրթ ազգերու պատմութեան ամենափայլուն շրջաններէ:

### Ս. ՇԽԱՐԱԴՐՈՒԹԻՒՆ

1. Քաղաքական աշխարհագրութիւն Ասիոյ, Ամերիկայի, Աֆրիկէի, Աւստրալիոյ եւ մանաւանդ եւ բոպայի: Այս երկրամասերու մանաւանդ եւրոպայի և Աւերիկայի մէջ գտնուող պետութիւնք և անոնց գաղթային կալուածները: Անոնց Մայրաքաղաքները և վարչական ու քաղաքական կազմակերպութիւնները, Անոնց երկրագործութիւնը, ճարտարարուեստը (industry) վաճառականութիւնը, արուեստներն ու գեղարվեստները, բնական հարստութիւնները: Ճամբաներն ու հաղորդակցութեան միջոցները, կրթուկան կազմակերպութիւնները, քաղաքակրթութիւնը եւն:

2. Լիբանանի և Սուրիոյ քաղաքական, վարչական և գատական կազմակերպութիւնը, անոնց հաշական և գատական կազմակերպութիւնը, ուրաքանչափ միջոցները, երկրագործութիւնը, գործակցութեան մարտարարուեստը, վաճառականութիւնը, բնական ճարտարարուեստը, արտածումն ու ներածումը, կըրհարստութիւնները, արտածումն ու ներածումը, կըր-

թական հաստատութիւնները եւ հին ու նոր քաղաքակրթութիւնը :

3. Ամփոփ տեղեկութիւններ տիեզերքի մասին, աստղեր և համաստեղութիւններ և զանազան երկնային բնական երեսոյթներ, կրկնել երկրի, արեւի, լուսի վերաբերեալ տեղեկութիւնները եւ ճոխացնել զանոնք նոր մանրամասնութիւններով; Բացատրել բնական մեծ երեսոյթներ, փոթորիկ, որոտում, արեւի և լուսի խաւարում, հրաբուխ, երկրաշարժ ևայլն :

4. Մասնաւորաբար տեղեկութիւններ ֆրանսայի և իր գաղթավայրերու մասին:

ՀԱՇԻՒ, ԹՈՒԱԲՈՆՈՒԹԻՒՆ,  
ԵՐԿՐՈՋԱՓՈՒԹԻՒՆ

1. ՀԱՇԻՒ ԵՒ ԹՈՒԱԲՈՆՈՒԹԻՒՆ.— Ա. Չորս գործողութիւններ ամբողջական, պարզ և տասնորդական կոտորակներով և բարդ թիւերով (nombres complexes); Բ. Մակերեսի հաշիւններ, զուգահեռական (parallélogramme), տրապեզ (trapéze), բազմանկիւն (polygone), շրջադիմ, շրջանակի հատուածի (secteur de cercle), զլանի (cylindre), բուրգի (cône), զունդի (sphère) և մակերեսային հաշիւններ; Գ. Մաւալի հաշիւններ, ուղղի հատուածակողմ (prisme) բազմանկիւն հիմով, բուրգ, զունդ: Դ. Խնդիրներ, տոկոսի (intégré), զեղչի (escompte), բաժիններու (partages), միջններու (moyennes) և խտութեանց մասին: Աստիճանական գործածութիւն տառերու և զրերով հաշիւններու և առաջին աստիճանի հանրահաշուական (algébrique) լուծումներ: Շարունակութիւն և զարդացում մտաւոր և արագ հաշուի:

2. ԵՐԿՐՈՋԱՓՈՒԹԻՒՆ.— Ընդհանուր աեղեկութիւններ հարթաչափութեան (géometrie plane) մասին, շրջագիծ (circonférence) և անոր բաժանումը 400 աստիճաններու, պարզ գործողութիւններ գետնաչափութեան (arpentage): տարրական տեղեկու-

թիւններ երկրաչափական զծագրութեան մասին:

3. Ընդհանուր տեղեկութիւններ մանաւանդ առեւարական տոմարակալութեան մասին:

ՏԱՐԵՐԻ ԲՆԱԳԻՑՈՒԹԵԱՆ ԵՒ ԲՆԱԿԱՆ  
ԳԻՏՈՒԹԻԵԱՆՑ

(Դիտողութիւններ, փորձեր եւ պտոյտերով դասեր)

1. ԲՆԱԳԻՑՈՒԹԻՒՆ (sciences physiques).—

Հիմնական սկզբունք և առարկայ. մարմիններ և անոնց յատկութիւնները, հիւլէական տեսութիւն և հաստատուն մարմիններ: Հեղուկներ և կազեր. օդ և ջուր, հնչողութեան օրէնք. հաւասարակշռութեան (balance) օրէնք, ծանրութիւն, լոյս, ձայն. ջերմութիւն (ածուխ, հանքածուխ, ջրածին, թթուածին, ածխածին, չողի և չողեշարժ մեքենաներ, ելեքտրականութիւն, մագնիսականութիւն. ծանրաչափ (bagotomètre), ջերմաչափ (thermomètre), սաւառնակ. օդանաւոր, ընդծովեայ. կողմացոյց (boussole), հեռախօս, անթել հեռազիր. շարժապատեր ելն. լուսակարչութիւն, ոսպնեակ. խոչըրացոյց հեռադիտակ, ելն:

2. ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ.՝ Մարդակազմութիւն, կենդանաբանութիւն, բուսաբանութիւն, հանքաբանութիւն: Մասնաւոր տեղեկութիւններ դպրոցի գոնուած երկրին կենդանիներու, բոյսերու և հանքերու, ինչպէս նաև հողի, քարերու և ժայռերու, բրածոներու (fossile) մասին, կազմելով անոնցմէ որչափ կարելի է պատիկ ժողովածուներ: Տարրական տեղեկութիւններ տարրալուծութեան (chemistry) մասին:

3. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԻՒՆ.՝ (hygiène) գործնական վարժութիւնք. ընդհանուր տեղեկութիւններ հիւանդութեանց պատճառներու (մանրէներ (microbes), մակարոյծներ (parasites) ելն.) չնառութեան, սնընդառութեան, (ալքոլականութեան վասանդները ելն).

զգեստեղէնի և տնային առողջապահութեան մասին:

4. ՏՆԱՑԻՆ ՏՆՏԵՍՈՂԻԹԻՒՆ.— (Enseignement ténéager) (աղջիկներու համար), զործնական վարժութիւնք խոհանոցի և մաքրութեան: Գիտական սկզբունք տնային տնտեսութեան:

5. ԵՐԿՐԱԳՈՐԾՈՂԻԹԻՒՆ ԵՒ ՊԱՐՏԻՉՊԱՍՈՂԻԹԻՒՆ. (horticulture).— Հիմնական և աւելի մանրամասնեալ տեղեկութիւններ մշակութեան (դաշտ, պարտէզ, անտառ), հողը պարարտացնելու բնական և արհեստական միջոցներու, հողի և անոր բարելաւումի և շահագործումի, ընտանիկան կենդանիներու մասին. Եւ հարկին շերամաբուծութեան, մեղուաբուծութեան, կաթնատնտեսութեան և ձկնորսութեան մասին հիմնական ամփոփ և փորձառական ծանօթութիւններ, զպրոցին գտնուած միջավայրին համաձայն:

### ԳԾԱԳՐՈՒԹԻՒՆ

1. Գծագրութիւններ գասարանի մէջ տիպարներով (modèles):

Ա. սովորական առարկաներ:

Բ. կենդանիներ, բոյսեր, ծաղիկներ եւայլն:

Գ. կենդանի տիպարներ հագուստով:

2. Զարդանկարներ, գծագրութիւններ և ուրուագծեր յիշողութեամբ, ազատ գծագրութիւններ գտնարանէն դուրս (մատիտով, bastelով, ջրանկար եւայլն.), դասերու նկարազգարում:

3. Կաղապարում (modelage) կամ ընդօրինակութիւն:

4. Երկրաչափական գծագրութիւն և դունաւոր նկարչութիւն, քարտէսներ և յատակադեր:

### ԶԵՐԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆ

#### Ա. Մանչեր

1. Շարունակութիւն միջին դասընթացքի վարժութեանց, փոքր առարկաներու պատրաստութիւն սովորական նիւթերով (կաւ, փայտ, խաւագարտեւայլն). զործածութիւն սովորական զործիքներու (փայտ ողորկել, սղոցել, փակցնել, գամել, տուփեր չինել, պարզ ելեքտրական և զանգակի վերաբերեալ զործիքներու տեղաւորում, վերանորոգում եւայլն):

2. ԱՐՀԵՍՏԱԳԻԾԱԿԱՆ. — Արհեստաներու վերաբերեալ նիւթերու մասին տեղեկութիւններ, զործիքներ, մեքենաներ: Գործնական այցելութիւններ արհեստանոցներու (atelier) և զործարաններու (usines):

3. Եթէ դպրոցը արհեստանոց մը ունի հոն պատրաստել զանգան զործածական առարկաներ գըծուած ուրուագծերու համաձայն:

4. Ուսուցանել մեքենագրութիւն (dactylographie) և սղագրութիւն:

#### Բ. Աղջիկներ

1. Սովորական կար, վերամածեալ (couture rabattue), փոթփոթուք (fronces), թլիփում կամ երիկում (bordage), ծալլում: Զանգան խառն վարժութիւնք:

2. ԿԱՐԿՏՈՒՔ (raccordage). — կարկատում զանգան կտորներու (étoffe). միանկիւն կտորով թելզակով (surjet) և վերահակեալ կարի վարժութիւններ: զափաճեռում կարկտուք զգեստներու. չափաճեռում վերանորոգում, կարկտուք զգեստներու. կամ ձեւագիտութեան դասեր:

3. Օղածոյ (tricot). կոսակեղ (crochet), պարզ և զործածական առարկաներու պատրաստութիւն (գըլխարկներ, վլնոցներ եւայլն):

4. Տեղական ասեղնագործութիւն . մեքենա-  
գրութիւն , սղագրութիւն :

### ԵՐԳ

1. Նախորդ տեսական ծանօթութեանց կըրկ-  
նութիւն :

2. Տարրական տեղեկութիւններ չափ (rhythme)  
մասին , բարդ չափեր , երրեակ (triolet) :

3. Վարժութիւնք solfègeի , դպրոցական , ազ-  
գային և եկեղեցական երգեր , խմբերգներ միաձայն : բաղմաձայն :

### ՄԱՐՄՆԱՄԱՐՁ

1. Կարգաւորեալ կրթիչ չարժումներ , նմանու-  
թեան շարժումներ , անհամաչափ շարժումներ :

2. Մարզանք եւ հաւաքական խաղեր :

3. Շնչառական մարզանք :

4. Լողալ :

5. Զգայարաններու մարզանք դպրոցական  
պլոյտներու ժամանակ : Պօյ-սկառուտիզմ :

6. Ծանօթ խաղեր , (ֆութպոլ թէնիս ևայլն) :

7. Շարունակութիւն ցողերով եւ չուանով  
են . մարզանքներու :

Ներկայ Կրթական Ծրագիրը պատրաստուած  
է Ուսումնական Խորհուրդին կողմէ 1930ին  
եւ վաւերացուած է Լիբանահայոց Ազգ.  
Վարչութեանն, 1931 Մարտ 8-ին, սիկողաբար  
գործադրուելու համար Լիբանանի բոլոր Ազգ  
Վարժարաններու մէջ 1931—2 ուսումնական  
սարիեն սկսեալ:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԱՏԷԱԴԱՂՎԻՐ

Վ. ՈՒՂՈՒՅԵԱՆ

ԱՏԷԱՎԱՎԵՏ

Հ. ԳՐԱԼԻԵԱՆ

ՎԱՐՉԱԿԱՆ ԺՈՂՈՎ

ԱՏԷԱԴԱՂՎԻՐ

Տ. ՄՐԱՎԵԱՆ

ԱՏԷԱՎԱՎԵՏ

ՏԵՐ. Յ. ԹՕՎԻԱԼԵԱՆ

Կաք. Տեղապահ Հայոցն Լիբանանի  
եղիշե Արքեզ. ԿԱՐՈԵԱՆ

1931. Մարտ 10  
ՊԵՂՐԵՔ

## ԿԱՐԵՒՄՈՐ ՎՐԻՊԱԿՆԵՐ

եջ	սող	սխալ	ուղիղ
7	18	տբուեցաւ	տրուեցաւ
12	11	նախակրթանի	նախակրթանի
12	12	դասարաններուն	դասարաններուն
12	15	գրանսայի	գրանսայի
12	29	անհքաժիշտ	անհքաժիշտ
18	29	:	
19	7	երկվանկներու	երկվանկերու
19	8	սկիզբը	սկիզբը
19	21	կողմէ	կողմէ
21	11	բազաձայներ	բազաձայներ
22	9	բարին	բարին
22	27	ե	ե
22	30	քաղուած	քաղուած
23	14	մշակելով	մշակելով
23	23	groupement	groupement
24	29	ունկնդրութեամբ	ունկնդրութեամբ
25	13	ստեղծագոլնութեէն	ստեղծագործութեէն
26	7	վսիմ	վսիմ
29	13	ֆրանսերէն և հայերէն	ֆրանսերէնէ հայերէն
30	8	ստորոգելի	ստորոգելի
31	7	դըրսւագներ	դըրսւագներ
31	10	(La Gaule) արշաւանքներ (La Gaule), արշաւանքներ	
32	7	գօտինները	գօտինները
34	7	հանքեր	հանքեր
34	11	ցուցագրութեամբ	ցուցագրութեամբ
35	3	:	
39	6	բառերու, ընտանիքներու եւ կազմութիւններ	բառերու, ընտանիքներու կազմութիւններ
40	5	քաղակրթութիւնը	քաղաքակրթութիւնը
42	25	ֆրանսերէն	ֆրանսերէն
43	11	restoration	restauration
46	7	gas	газ
54	25	համաձայնութիւն	համաձայնութիւն
56	33	:	



ՀԱՅՈ-ԱՐՄ ՀՍՀ



50. 419